ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

# ԿԱԼԿԱԹԱՑ

ԳՐԱՂԱՐՈՒ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1832

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ԿԱԼԿԱԹԱՑ

ԳՐՈՂՈՒԹՅՈՒ

W. A. Lugupnuffig

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

# ԿԱԼԿԱԹԱՅ

## ՎՐԱՊՔԻՒ

ԶՈՐ ԵՐԱՐ

ՊԱՐՈՆ ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԼԱԶԱՐՈՎԻՉ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԵՑԻ

Ի ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԵԼ ԻՒՐՈՒՄ

ՅԱՐԵՒԵԼԵԱՆ ՀՆԴԻԿՍ

Գ/ 746

Ի ՎԻՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1882

(2)

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

# ԿԱԼԿԱԹԱՅ

## ՎԵՐՁԱՔԻՒ

ԻՂՁ աշխարհատեսութեան, որ իրաւապէս արդ կարեւոր մասն բարւոք դաստիարակութեան համարի առ բարգաւաճեալ ազինս, շարժեաց և զիս ուղեւորել 'ի տար աշխարհս։ Եւ յանցանելն իմում 'ի Մադրասէ յաշխարհն սինէացւոց 'ի Պանթէոն, կամք եղեն ինձ տեսանել և զԿալկաթա մայրաքաղաք Պանկալայի։ Եւ քանզի բաղումք 'ի մերազնեայց գտանին անդ վաճառականք երևելիք, ընդ որս մտերմացեալ՝ սփոփեցայ 'ի պանդխտութեանս իմում, վասն որոյ զքաղաքն զայն սիրելագոյն ինձ՝ կամիմ ստորագրել, թողլով յետագայից զայս դուզնաբեայ արձանագրութիւն զիմոց ախորժակաց։

'Ի քսան և ութերորդ աւուր ամսոյն սեպտեմբերի, յամի տեառն 1829, Պարոն Հ՚ան Վրէմ պրուէձի նաւավարութեամբն Լէփթիւն նաւաւելի 'ի Ճանապարհ 'ի Մադրասէ, և 'ի չորրորդում աւուր ամսեանն հոկտեմբերի աջողակ հողմով մտի 'ի ծովէ 'ի գետն Գանգէս. և նախ տեսի զՄակրը, 'ի հինգերորդումն հասի 'ի Վիձիրի, և 'ի վեցերորդումն 'ի Տէմընդ-հարպրը, 'ի Կեարտընռիչ և 'ի Կալկաթա։ Վաղաքս այս կառուցեալ յեզր վտակի միոյ Գանգէս գետոյն ընդ արևմտակողմն, հեռի 'ի բերանոյ գետոյն 600 ասպարիզաւ, կամ 75,000 քայլիւք, անկանի ընդ 106°. 39'. արևելեան աստիճանաւ երկայնութեան, և ընդ 22°. 34'. հիւսիսային աստիճանաւ լայնութեան։ Այս բնակիչք նորա են իբր 900,000, ընդ իշխանութեամբ անգղիական պետութեան։

Մակրը է բերան Գանգէս գետոյն և նաւահանգիստ վտանգաւոր, մանաւանդ 'ի ժամանակս մակընթացութեան Ովկիանոսի՝ որ սաստիկ է յոյժ 'ի ծննդեան և 'ի լրման լուսնի։ Ընդ խարիսխս արկանեն մեծամեծ նաւք անգղիական տերութեան։ Բ.յլ և Ինձիմէն անուանեալ վաճառական նաւք ընկերութեան արևելեան Հնդկաստանի, զի չէ նոցա հրաման յառաջ խաղալոյ աստի 'ի գետն Գանգէս. քանզի խորութիւն նորա հազիւ հասանէ 'ի տեղիս տեղիս իբրև յերկու և յերիս գրկաչափս, վասն որոյ ջուրն չէ բաւական 'ի գնացս մեծամեծ նաւաց։ Բ.յս նաւահանգիստ հեռի է 'ի Կալկաթայ առաւել քան զեօթանասուն մղոնս. և երբեմն անյաջող հողմոյ դիպին նաւք, և յայնժամ 'ի նաւահանգստէս մինչև 'ի քաղաքն տևէ զաւուրս ութ, և երբեմն մինչև Հնգետասան



7.

Umsichtungsmauer des Stiftes

1. Stiftskirche 2. Presbyterium 3. Altarbauwerk

4. Klosterpforte zur Linken 5. Klosterpforte zur Rechten

և աւելի ևս։ Այս զգուշութեամբ նաւարկեն, ան-
ցանելով առ նշանաքն եղեալքի 'ի քննչաց. և 'ի
հրամանէ տերութեան գայ առաջնորդ 'ի նաւն՝
ուղեցոյց լինել, 'ի ցերեկի միայն նաւարկելով. իսկ
գիշերի խարիսխ արկանեն։ Այս 'ի գալ նորա, դա-
դարէ հրաման նաւապետին և ամենայն պաշտօ-
նատարացն մինչև 'ի քաղաքն։

'Ի Վիճիրի և 'ի Տէմբնդ-հարպերը տեսի բա-
զում մեծամեծ շինուածս. է որ 'ի բնակութիւն
բնիկ բնակչացն, և է որ 'ի տեղի զբօսանաց. և գոր-
ծատունս լեղակի, շաքարի և ցքւոյ, որ 'ի լեզու
հնդկաց կոչին Վոռէ. և բազում արտորայս որի-
ղոյ, քաղցր եղեգան և լեղակի. որ առհասարակ
են ստացուածք զանազան անձանց, և տեարքն նո-
ցա անուանին Օլմինտար։

'Ի Կեաբտրն-ռիչ են բնակութիւնք և պար-
տէզք, յորս բնակեն Ճոիք անգղիացւոց և այլոց
ազգաց, այլ և մերազնեից։ Որոց առաջին շինուած
է 'ի մուտս անդ յայնակողմն երկյարկեան տուն
Պարոնաց Սիմոն և Գէորգ Փանոս Բարաղամի.
և կից նորա է տուն Պարոն Յովհաննէսի Աղիա-
զեան, և Պարոն Խաչիկ Աբրահամի։ Օ կնի երից
շինուածոցս՝ են և այլ բազում տունք և պար-
տէզք օտարազգեաց. և հանդէպ նոցա 'ի ձախա-
կողմն մտից է ուսումնարան անգղիացւոց՝ կոչե-
ցեալ եպիսկոպոսական Ճեմարան, մեծաշէն հոյա
կապ և գոթացի ձևով երկյարկեան, յորում են
բազում առանձին բնակութիւնք վասն վարժապե-
տաց և աշակերտաց. այլ և գրատուն, սեղանա-
տուն, ատեան խորհրդոյ վերակացուաց, և եկե-
ղեցի։ Իսկ յետկոյս շինուածոյն է և այլ շինուած
փոքր, յորում կառուցեալ կայ տպարանն արևե-

լեան և արևմտեան այլևայլ լեզուաց։ Իսկ 'ի դպրատանն ուսուցիչք զանազան լեզուաց վարժապետեն Ճոխ վարձիւք, զոր հատուցանէ նոցա անգղիական ընկերութիւնն. և ուսանողացն չիք ինչ պարտականութիւն հատուցանելոյ։ Տեսի անդ պատանիս երկու 'ի մերազնեայց, որոց անուանքն էին Բարաղամ և Պետիաննոս. և վարժապետ հայկազեան բարբառոյ էր Պետրոսն Գաւթեան Լաղիսթեանց երևանցի, 'ի Կարբի գեղջէ. որ և վերակացու էր տպարանին Հայոց, և տպէր ինչ ինչ ըստ հաճոյից իւրոց։

Կից ուսումնարանիս է հռչակաւոր Լ՝Բ՝ՐՈՊԷԷ-ՐԷ պարտէզն անգղիական ընկերութեան, զարդարեալ ամենատեսակ ծառովք և բուսովք այլևայլ աշխարհաց. և դարձեալ պարտէզ բանջարեղինաց այլովքն հանդերձ։ Այն 'ի նմա դրախտապանք և հողագործք հարիւրաւոր, և բազմութիւն սուսերամերկ և վահանաւոր պահապանաց. և բազում ուրեք աւազանք ջրոց, և Ճանապարհքն առ հասարակ մաքուր, և 'ի տեղիս տեղիս մանկախիտ հովանաւորք՝ առ 'ի պահպանութիւն Ճեմելոցն 'ի տօթոյ արեգական։

Բերդն, կոչեցեալ ըստ անգղիական բարբառոյ Ֆ՝Օ՝Ռ՝Թ՝Ս՝Մ՝Ի՝Ս՝, է շինեալ 'ի գետափն Գանգէսի. շուրջ զնովաւ դաշտ մեծ, և 'ի տեղիս տեղիս խրամք ըստ եւրոպեան կանոնի. այլ այնու ամենայնիւ անպատսպար է քաղաքն։ Գոն բազում բնակութիւնք 'ի մէջ բերդիս, այլ և եկեղեցի գոթացի ձևով Ճարտարապետեալ վասն զօրաց անգղիացւոց. և քահանայ թոշակաւոր բնակէ 'ի բերդն մերձ յեկեղեցին, ունելով իւր անդ առանձին բնակարան։



9.

Unken kaiserlichen Eingangs

Thorempel

Փողերանոցն մեծաշէն և յոյժ գեղեցիկ, զոր բնակիչք տեղւոյն կոչեն նոր Ամանքսալ, է շինուած հոյակապ. և բազմութիւն զարմանալի մեքենայիցն հրով շարժին 'ի ձեռն շոգւոյ, և հատանեն դրամս, այս ինքն կոփեն, կտրեն, կշռեն և տպեն. և այն ամենայն գործիք երկաթեայ Ճարտարաշէնք բերեալք են առ հասարակ ՅԵւրոպայ. որոց տեսիլ նոցա ասղէցուցանէ զտեսողս։ Ասաց յայսմանէ է և այլ փողերանոց, զոր բնակիչք տեղւոյն կոչեն հին Ամանքսալ, ոչ ինչ փարթամ շինուածով. և է այն անգործ. վասն զի զկնի շինելոյ զնոր Ամանքսալն, առաջինն այն անպիտան համարեալ է։

Պարանք անգղիացւոյ հիւպատին է 'ի Թաղն՝ որ կոչի ԼՕՎԷՆԴԷՆԴ-ԷԼԷ, շինուած մեծ գմբեթաւոր և հոյակապ, ձևով իբր քառանկիւնի՝ 'ի վերայ չորից Ճանապարհաց. շրջապատեալ երկաթեայ վանդակաւ, և կամարակապ սիւնազարդ մեծամեծ դրամբք, երկաթի վանդակեալ փեղկօք՝ որ միշտ 'ի բաց կան, և հային 'ի վերայ Ճանապարհացն, միաձևք առհասարակ. և 'ի վերայ կամարացն՝ առիւծ մեծ, ունելով գնտակ ընդ թաթիւ, որ 'ի նշանակ յաղթութեան եդաւ՝ յետ պարտութեան Ամիրաս սուլթանին 'ի հիւպատէն անգղիացւոյ։ Յաւ առ դրամքն տքնին զինուորք հանապազ՝ ըստ եւրոպեան օրինի։ Զուրջ զշինուածոն մինչև յերկաթեայ վանդակն է դաշտ մեծ, և մանն ինչ պարտէզ զարդարեալ, ուր զգիշերն ողջոյն վառին 'ի տեղիս տեղիս լապտերք ապակեայք։ Այլ և 'ի նեբքս և արտաքոյ 'ի վերայ դրանցն վառին լապտերք աւելի քան զյիսուն 'ի հասարակ աւուր. իսկ յաւուրս հանդիսի չիք թիւ վառելոց Ճրագացն։

Լրը հանդէպ տան հիւպատին են բաղում մեծամեծ շինուածք, որք են Լրէ՛ծբրի՝ այսինքն գանձատունն, և գործատուն համարակալին և դիւանադպրին, և այլ զանազան պաշտօնատարաց տէրութեանն։ Յորս բազմութիւն գրագրաց՝ աղգաւ Փորթուգէշք, և յայլոց ազգաց, վաստակեն 'ի լեզու անգղիացւոց հարուստ թոշակաւ. գտանին և անգղիացի գրագիրք, բայց յոյժ սակաւք։

'Ի գետափն Լանգէսի է լայն և ընդարձակ Ճանապարհ, որ ձգի մինչև 'ի Կեաբտրն-ռիչ, և անդր ևս. և ընդ միւս կողմն գնայ 'ի թաղն Լօռս և 'ի Ղովբրնկի. Ճանապարհ լայն և մաքուր իբր տեղի զբօսանաց, ուր յերեկոյեան պահու բազմութիւն բնակչաց քաղաքին գնան շրջել դեսպակաւ, երիվարօք և կառօք. որոց թիւ հասանէ երբեմն ցհազարաւորս, մինչև անիւք ընդ անիւս զիրարեալ անցանեն։ 'Ի կողմն գետոյն է և այլ Ճանապարհ հետիոտս գնացողաց, ապահով 'ի վրտանգէ կառաց։

'Ի գետափն անդ է և շինուած փոքրիկ քառակուսի աղիւսակերտ և ամուր, և 'ի նմա ջրքշան երկաթի Ճարտարագործ, որ 'ի բնակչաց տեղւոյն կոչի Ջամբալկադ։

Լ. և դատաստանատուն կամ վերին ատեան՝ զոր կոչեն անգղիացիք Այ-Էրէմ փօրթ, իսկ հնդիկք Պարայ ատալէրթ. և կից նմին առանձին դատաստանարան վասն պարտապանաց, զոր կոչեն Լանսօլվէնդ փօրթ։ Այս վերին ատեան է շինուած մեծ և երկայարկեան. են 'ի նմա դատաւորք երեք, և օրէնսգէտք և փաստաբանք աւելի քան զյիսուն, Ճարտարք 'ի խաբէութիւն՝ որպէս որսորդք քաջք որոգայթադիրք. և ոմանց 'ի նոցանէ են թիկնա-

պահք յազգէս Հայոց, Գրիգոր Օտատուր, և Յովհան Մովսէս, և այլք։ Կարգ դատարանիս է այսպէս. յամին չորիցս անգամ նըստին դատաւորք 'ի դատել. և կոչին աւուրքն այն Ամէրմ, որ է ժամանակ դատաստանի։ Առաջին ժամանակն սկսանի յեօթն յունուարի, երկրորդն 'ի հնգետասան մարտի, երրորդն 'ի հնգետասան յունիսի, չորրորդն 'ի քսան և երկու հոկտեմբերի. և իւրաքանչիւր ժամանակք տևէն զաւուրս քսան և ութ։ Զկնի յաջորդէ Աէրէն, այս ինքն գումարումն, որ և տևէ չորեքտասան օր, և միահամուռ գումարին 'ի քառասուն և երկու աւուրս. և ապա աւուրք պարապութեան երեք օր։ Իսկ զկնի երիցաւուրցն սկսանի ատեանն քրէական յանցաւորաց, որ կոչի Աէլբ, այս ինքն է նիստ. և ժամանակ սորա չէ սահմանեալ, այլ է ըստ բազմութեան և նուազութեան յանցաւորաց. այս ատեան վճռէ մինչև ցպատուհաս կախաղանի։ Զկնի քրէական ատեանին մինչև 'ի միւս նիստն է Զէմոբբ, այսինքն նիստ միոյ դատաւորի երկիցս 'ի շաբաթու, յերկուշաբաթի և յուրբաթի 'ի հասարակ և կամ յառանձին սենեկի 'ի նմին դատաստանատան, դատել զիրս մանաւորս և զերդմունս, առանց վճռոյ. զի ամենայն վճիռ էլանէ յատենէ 'ի չորս ժամանակսն։ Իսկ եթէ չիցէ ոք հաճ ընդ վճիռն, կարող է բողոքել 'ի Զնտոն. բայց ծախք դատաստանին կարի մեծամեծք են։

Այլ 'ի վերոյգրեալ ատենէն՝ գոյ և այլ ատեան 'ի Վալկաթա, ուր հնդիկ դատաւոր դատէ զհամազգիսն միայն յօրէնս քաղաքականս։ Այլ յետ վճռոյ այնր ատենին՝ կարող են բողոքել դատախազք 'ի վերին ատեանն. և նորա վերստին

քննեալ զդատաստանն, է՝ զի հաստատէ զվճիռն, և է՝ զի մերժէ զայն, և այլազգ վճռէ։

Ի հարաւակողմն Պոռսին՝ որ հանէ 'ի Կեսարիա տրն-ուիչ, է քարեայ կամուրջ երկաթի գօտեաւ, ամրակառոյց և գեղեցիկ. ուր 'ի գիշերի վառին լապտերք։ Մերձ 'ի սա են բնակութիւնք և կրպակք հնդկաց, և վաճառանոց մրգաց և քաղցրաւենեաց՝ որ կոչի Ճըլէպի, խառնեալ շաքարաւ և իւղով. որ քաղցր է 'ի քիմն՝ այլ դժուարամարս, զի թթուի 'ի ստամոքսի. բայց յոյժ ախորժեն զայն բնակիչք տեղւոյն։ Պոտանին 'ի Կալկաթա կրպակք քաղցրավաճառաց իբր հազար, զի անդ առատութիւն է յոյժ շաքարի. և շաքար և որիզ, դիւրագինք յոյժ անդ, կերակուր են աղքատաց ընդ ամենայն իսկ հնդկաստան, մանաւանդ 'ի Կալկաթա քաղաքի։ Մերձ քարեայ կամրջիս ընդ արևմուտս՝ է և չուանեայ կամուրջ վասն հետիոտս անցաւորաց, ճարտարարուեստ և զարմանալի, հաստաշինած և ընդարձակ։

Ի գետափն Պանգեսի են զանազան եկանելիք Էնէէ, որք կոչին կադ. շինուածք փայտակերտք ամուրք և մեծամեծք լայնք և ընդարձակք, 'ի պէտս դիւրութեան հասարակաց։ Յոմանս 'ի նոցանէ են բեռնբարձ մեքենայք, վասն դիւրաւ 'ի վերս հանելոյ և իջուցանելոյ 'ի նաւ զվաճառս։ Մերոյն անուն է Հայոց կադ. և կոչի այսպէս՝ վասն մերձ գոլոյ եկեղեցւոյն և թաղի բնակութեան Հայոց. և կամ զի ընդ երեկս ժողովին ոմանք յազգէս անդր՝ զբօսնուլ ընկերակցութեամբ, և յայսմանէ թերևս կալեալ է զանունն Հայոց կադ։ Այն առ գետափամբն և բաղում այլ ևս կադք զանազան անուամբ. և քարեայ սանդուխք՝

երկաթի վանդակեալ դրամքք, և ապակեայ լապտերքք առ նովաւ՝ վասն մտանելոյ անտի 'ի նաւ մեծամեծաց քաղաքին։ Ընթիւ է բազմութիւն նորանոր ազգի ազգի նաւակաց 'ի գետն Պանդէս, կէսք բեռնբարձք և կարասեկիրք, այլք վասն այլ և այլ պիտոյից մարդկան։ Եւ միւս այլ ազգ նաւակի ընտրելագոյն առ 'ի զբօսանս, Պա՛ՀՐայ անուանեալ, ոսկեզօծ և փառաւոր, զանազան մեծութեամբ. յորում են բազում սենեակք, և խոհանոց, և ամենայն առանին պիտոյից տեղիք, ապակեայ մեծամեծ պատուհանօք և դրամքք. որպիսի ինչ ոչ եղև ինձ տեսանել յայլ քաղաքս, բայց միայն 'ի Պանթէոն։

'Ի գետափն անդ է մեծակառոյց շինուած գեղեցիկ չորեքյարկեան, յորոյ յերկրորդումն յարկի են իբր քսանեչորք աղորիք կամ հրաղացք ալեր. իսկ 'ի ներքնայարկն երկաթեայ մեքենայք հրաշարժք, որք 'ի ձեռն շոգւոյ շարժեն զաղորիս յերկրորդումն յարկի. գործ Հարտար, և մեքենայքն ամենայն բերեալք Եւրոպայ։ Իսկ 'ի վերնայարկսն է տեղի մաքրելոյ զցորեանն, մաղելոյ զալիւրն, և այլն։ Եւ այն ամենայն կատարի մեքենայիւք. զի 'ի վերուստ ինքնին դայ ցորեանն և մտանէ յաղորիս. և զկնի յալիւր դառնալոյ՝ մղեալ 'ի վեր, մտանէ 'ի մաղն, և մաղի։ Եւ ինն անդ յազգայնոցս մերոց վերակացուք 'ի վերայ մատնաւոր գործոց։

Ողորմելի է երևելի թաղ անդ ի հացուոց. են անդ և տունք այլազգեաց, այլ առ հասարակ 'ի վարձու կալեալ յեւրոպացւոց թանկագին վարձուք։ Եւ 'ի թաղիս և թէատրոն, ուր տեսի զՏիկին Լիջն քաղցրերգակ։ Պանդոկք քաղաքիս ոչ

են բարեկարգք որպէս յԵւրոպա և 'ի Ազիա. զի թէպէտ և գտանին բազմութիւն պանդոկաց, բայց յոլովագոյնք յայնցանէ աղտեղիք են և գծուծք. վասն որոյ յոյժ դժուարին է որոց չունին անդ ծանօթս, և չէ բաւական ձեռն նոցա առանձին տուն 'ի վարձու ունելոյ, գտանել հանգիստ։

Եւ ուսումնարան Հայոց 'ի Թաղն Մուրկիաթայ, կոչեցեալ Մարդասիրական Ճեմարան, և գրատուն փոքրիկ 'ի նմա։ Մնդ վարժէին մանկունք և պատանեակք յազգէս իւրք վանքսուն 'ի բնիկ և յանգղիական բարբառ, և յայլ լեզուս. աղքատաց ձրի ուսանելով, իսկ մեծատանց՝ վարձիւք։ Տեսի անդ վարժապետս երկու եւրոպական լեզուաց, և երկու ևս հայ բարբառոյ, զՊարոն Յարութիւն Պալուստ, և զՊարոն Յովհաննէս Մէդալ։ Եր աշակերտեալ 'ի վարժարանիս և որդի Հրէի ուրումն վաճառականի 'ի ցեղէն ղևտացւոց, Սոլոն Պօղոսն անուն։ Եւ անդ և փոքրիկ տպարան Հայոց, և սենեակ տպագրելոց վաճառելի գրեանց իւրք կրպակ. և գրավաճառ անդ Եվլիազ Մէդալեան շիրազեցի։ 'Ի կողմն փողոցին 'ի վերայ դրան վարժարանիս էր արձանագրեալ անգղիարէն և հայերէն երկաթագիր, ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ։ Կից ուսումնարանիս էն կրպակք կօշկակարաց և պղնձագործաց։

Մէրձ 'ի Մուրկիաթայ Թաղն է միւս այլ փողոց՝ որ հանէ 'ի հին Ազնէպազար, Սուքիաս Լէնտ անուանեալ. յոր 'ի համարաթուին 26 յերեք յարկեան տանն բնակեցի ես զամիս իւրք տան։ 'Ի փողոցի անդ էին բնակիչք Պորթուգէզք և Հրեայք. և ընդ ամենայն քաղաքն գտանին Հրեայ տունք իւրք վանքսուն, պարապեալք առ հասարակ

'ի գործ վաճառականութեան. և ոմանք 'ի նոցանէ էն մեծահարուստք։ Ունին և Վենակոկա կրկնայարկ փայտաշէն, հանդէպ եկեղեցւոյն լատինացւոց. որ էր կանխաւ տուն Հայոյ ուրումն Ղեր-սէսի, որոյ որդիքն էն արդ 'ի Վադրաս։

Եկեղեցին Հայոց կոչեցեալ սուրբ Ղազարէթ, ունելով առ ընթեր դաշտ գերեզմանատեղի, է շինուած ամրակառոյց կամարակապ 'ի վերայ սեանց. որոց կարի ինն ստուարութիւն եղծանէ զգեղ Ճարտարապետութեանն։ Են 'ի նմա սեղանք երեք. աւագ սեղանն, և երկու այլք յաջմէ և յահեկէ 'ի վերայ աւանդատանց. և զանգակատուն յարևմուտս հանդէպ աւագ սեղանոյն, կից եկեղեցւոյն. և 'ի վերայ նորա ժամացոյց մեծ՝ բերեալ Եւրոպայ ծախիւք հանգուցեալ Պարոն Խաչիկ Աբաքելի։ Են նորա դրունք երեք, առ որովք 'ի գիշերի լապտերք վառին. և մին 'ի նոցանէ կոչի դուռն Յարութեան։ 'Ի սրահի եկեղեցւոյս է կրկնայարկ բնակարան քահանայից, շինեալ յընչից նորին ինքեան Պարոն Խաչիկ Աբաքելի, որ թաղեալ կայ 'ի մէջ եկեղեցւոյն 'ի ճախակողմն մտից՝ արտաքոյ դասին։ Արդի սորա տեր Յովհաննէս է այժմ վիճակաւոր քահանայ Հայոց 'ի Ղիւրա, յեկեղեցւոջ սրբոյն Յովհաննու Վկրտչի. և ունի անդ ծուխս իբր հինգ։

Կից եկեղեցւոյս է կրկնայարկ տուն Պատիւլ-մըսէհի, քառակուսի ամրաշէն, հայելով 'ի վերայ երկուց Ճանապարհաց. և 'ի ներքոյ տանն են բազմութիւն կրպակաց, որոց եկամուտք՝ տանն և կրպակացն՝ կտակաւ թողեալ են 'ի նոյն Պատիւլ-մըսէհի 'ի ժառանգութիւն Օրիգորուպօլիս քաղաքի, որ և Զօֆ։ Այս է տեսչութիւն տանն և

կրպակացն 'ի ձեռս ատենադպրի անդղիական վե-
րին ատենի տեղւոյն . վարձ տանն է յամսեան
ութսուն ռուփի , և կրպակացն միոյ միոյ հնգե-
տասան ռուփի ։ Հանդէպ եկեղեցւոյս են և այլ
տունք ազգայնոցս , և Տէր Յովսէփայ աւագերի-
ցու տեղւոյն . և 'ի ներքնայարկս ամենեցուն կըր-
պակք հատուածառաց և արծաթագործաց և այլ
զանազան իրաց ։

Փողոցն Հայոց , զոր անդղիացիք կոչեն Ռ.Ռ-
ՔՆԷՍ ՍՏՐԷԹ և մերազնեայք Հայոց քուչա , վասն
մերձ գոլոյ յեկեղեցին՝ յարգի էր յառաջագոյն առ
Հայ պարոնայս . վասն որոյ և շինեցին նոքա անդ
ապարանս մեծամեծս և կրկնայարկս ։ Բայց փո-
ղոցն այն չէ համեմատ շինուածոցն . զի նեղ և ան-
ձուկ է և տղմուտ , մանաւանդ յանձրևային ժա-
մանակս ։ Այլ զի դարձեալ բնակեն անդ վաճա-
ռականք կարմրաներկ փայտին՝ որ կոչի պախամ ,
և սայլիւք եղանց կրելով զայն , հարեալ ընդ որմն՝
գործեն աւերած , և զզգեստս անցաւորաց քաշքը-
ձեն . որ դժպհի իմն է ։ Բնակեն 'ի թաղիս հայ-
ազգի պարոնայք Սարգիս Յովհաննէս Սարգ-
սեան , Սարգիս Յովհաննեան , Աւետ և Ղազար
Աշաբեգեան , Խաչիկ և Փիլիպպոս Ճատուր
Գէորգեանց , և այլք 'ի մերազնեայ պարոնաց իբր
տասն . ոմանց ունելով տուն սեփական , և ոմանց
'ի վարձու կալեալ ։ Իսկ այլ տունք փողոցիս են
բնակարանք այլազգի վաճառականաց ։ Մերձ 'ի
փողոց անդր է մեհեան կռապաշտից , որք ընդ ե-
րեկս ծնծղայիւք կատարեն զպաշտամունս իւրեանց
'ի ձանձրոյթ մերձակայ բնակչաց ։

Իսկ եկեղեցին Յունաց է Սմիրնոլլայ թա-
ղին , մերձ 'ի փողոցն Հայոց . գեղեցիկ և բարեձև

Ճարտարապետեալ յանձուկ սրահի բարձր 'ի յա-
տակէն, յոր ընդ քարեայ սանդուղս ելանեն 'ի
վեր։ Այն նորա ծուխք իբր տասն, և քահանայ մի.
փոքրիկ եկեղեցիս այս՝ Ճոխ է յոյժ եկամտիւք 'ի
բազմութենէ տանց. զոմանս յայնցանէ գնոց ստա-
ցեալ, և զոմանս պարգև 'ի բարեպաշտից ազգին
ընկալեալ. և զամենեսեան առհասարակ 'ի վար-
ձու տուեալ, օրըստօրէ յաւելու 'ի Ճոխութիւն։
Տեսչութիւն եկեղեցւոյս և հոգք եկամտից նորա
է 'ի ձեռս երևելեաց ազգին, որդւոյ Ջ՝ օն Լու-
կասի, և Ցանթազիա վաճառականի։ Նս յոյժ
սիրով են Յոյնք ընդ մերազնեայ պարոնայս 'ի
քաղաքիս։

Ուրնթեր եկեղեցւոյս է տուն Պարոն Դաւ-
թի Յովհաննիսեան Ջուղայեցւոյ, առն լաւաբա-
րոյի։ Այն 'ի փողոցիս այլք ևս յազգայնոցս բնա-
կեալ, Յարութիւն Ալ՝ ըթանէս, Կարապետ Յա-
կոբ, և այլք. է անդ և ժողովարան Հայոց երիտա-
սարդաց, ընդ առաջնորդութեամբ Պարոն Յով-
հաննու Ա՝ աքարիայի, և Պարոն Խաչիկ Ուստուա-
ծատրոյ, և այլոց։

Մերձ յեկեղեցին Հայոց 'ի թաղն Համամ-
կըլլի՝ է բաղանիք փոքրիկ գմբեթաւոր, համանը-
ման մերոյ աշխարհիս բաղանեաց. յորում են եր-
կու ևեթ աւազանք ջրոյ, և վերակացու նորա է
յազգէս Ռաթէոս ոմն անուն։ Բաղանիքս այս
կտակաւ թողեալ է եկեղեցւոյն Հայոց 'ի բարե-
պաշտէ ումեմնէ յազգայնոցս 'ի ժառանգութիւն.
և է պատուէր կտակին, զի Հայ քահանայք տե-
ղւոյն յամենայն եօթնեկի ձրի լուղասցին անդ.
իսկ այլք հատուցանեն մի ռուփի և կամ ևս ա-
ւելի ըստ հաճոյս։ 'Ի վերնայարկ բաղանեացս է



Ա/745

բնակարան փայտակերտ, որոյ պատուհանք հային 'ի փողոցն։

'Ի հիւսիսակողմն Մուրկիաթայ թաղին, որ հանէ 'ի Ղընէ պազար և 'ի Թրէթի պազար, 'ի գռեհ մինեղ և գծուծ՝ է տուն մեծ միայարկ. յորոյ 'ի վերայ դրանն դրոշմեալ կայ երկաթագիր ՀԻՐԱՆՈՑ ՀԱՑՈՑ։ Այս է սա ընդ ձեռամբ պաշտօնատարաց եկեղեցւոյն Հայոց, որ անուանեալ կոչի սուրբ Նազարէթ։ Այս տուն կտակաւ թողեալ է 'ի բարեպաշտէ յումեմնէ ազգիս վասն պանդուխտ և աղքատ Հայոց, ձրի բնակել անդ զամիսս երիս և կամ ևս աւելի. և անուն տանն կոչի Խայրաթխանայ։

Ընդ 'ի Մուրկիաթայ անուանեալ թաղին, 'ի հիւսիսոյ 'ի հարաւ, է երկայն Ճանապարհ՝ որ հանէ մինչև 'ի Հայոց թաղն. և անուանի Փէրէ-գէչ Ջաբ ըսուրէր։ Ընդ է եկեղեցի լատինացւոց մեծաշէն գեղեցիկ և ամրակառոյց. ունելով շուրջանակի սրահ մեծ 'ի վերայ երից այլևայլ փողոցաց, և դրունս երիս՝ յորս 'ի գիշերի լապտերք վառին. ունի և զանգակատուն բարձր և գեղեցիկ։ Այս է եկեղեցիս այս ընդ խնամակալութեամբ Գ. գոստինեան քահանայից։ Եկեղեցւոջ աստ թաղեալ կայ Հայր Սուքիաս վարդապետն Ղզմալեան, 'ի մխիթարեան ուխտէն՝ որ 'ի Վենետիկ, և քեռին իմ Պարոն Կարապետ Մուրատեան։ Հանդէպ եկեղեցւոյս է տուն կրկնայարկ 'ի բնակութիւն քահանայից, որ է կալուած եկեղեցւոյն. և 'ի շրջակայ փողոցս են տունք մերոց համազգեաց, Յովհաննէս Հայրապետի Յարութիւնեան, Պրիզոր Աբեթիսի, և այլոց. և ժողովարանն Հրէից, զորմէ 'ի վեր անդր դրեցաք, և փոքրիկ դպրոցն

Պէնէթի վարժապետին անգղիական բարբառոյ, և տուն մահմէտական վաճառականին Հալպա-ղայի Մուհամմէտի. որ ամի ամի յամենանն մու-հարրէմի՝ զաւուրս ութ զգիշերն ողջոյն հաղարա-ւոր լապտերօք զարդարէ զտուն իւր և զփողոցն, և ընդունի 'ի տուն իւր յամենայն ազգաց 'ի զնին տեսարանին։

Լ։ և այլ եկեղեցի լատինացւոց նորաշէն 'ի Պիդրխանայ թաղին, գեղեցիկ և ամրակառոյց, շի-նեալ արդեամբք բարեպաշտի ուրումն տիկնոջ, եր-բեմն մահմէտականի։ Որոյ գերեզմանն էր 'ի մէջ եկեղեցւոյն, վէմ 'ի վերայ նորա, և արձանագիր յորմն անդր մերձ գերեզմանին. և զպատկեր նորա տեսի նկարեալ 'ի սարկաւագանոց եկեղեցւոյն։

Լն 'ի քաղաքիս և բազում եկեղեցիք անգ-ղիացւոց, հոյակապք և գմբեթարդք. յորոց մին է մերձ Լալտրկի աւազանին, և բակ նորա շրջա-պատեալ երկաթի վանդակօք, հանդերձ երկաթի վանդակեալ դրամբք։

'Ի Մուրկիաթայ թաղին են տունք սակաւք ազգայնոցս. և բնակեն անդ Պարոն Յովհաննէս Լվիազեան, Պարոն Մէլքում Գասպար, Պարոն Մովսէս Սահակ Շմաւոնեան, և այլք ոմանք։ Ինդ ճախակողմն թաղիս, 'ի հիւսիսոյ 'ի հարաւ, է լայն և ընդարձակ Ճանապարհ՝ կոչեցեալ Ռուլու թողլայ, և ըստ Հայոց՝ բարեվից թաղ. ուր բնա-կեն Տիկնայք և մեծուհիք Ճոխք և փարթամք հնդկաց, տաճկաց, և այլոց ազգաց։

Հին Ղընէ պազար, որ է փողոց երկայն՝ հիւ-սիսոյ 'ի հարաւ. և երկուստեք Ճանապարհիս են կրպակք բազումք, յորս վաճառին ամենայն պի-տոյք դիւրագնի, զանազան կտաւիք եկեալք Լ։ու-

բոպայ և 'ի հնդկաց, զգեստք պատրաստականք, մետաքսեայ թաշկինակք, և փայտեայ սպասք կահք և կարասիք տան և խոհանոցի. այլ և արկեղք, և կազմածք պղնձիք և երկաթեղէնք, այլովքն հանդերձ։ Յաջմէ և յահեկէ հրաւիրեն կրպակաւորքն ձայնիւ մեծաւ զանցաւորս, և մանաւանդ զօտարականս, մինչև տաղտկանալ նոցա։ 'Ի թաղի աստ բնակէն հայազգի պարոնայք, Գէորգ Փանոս Խարաղամեան, Լամին Յովսէփ Լամինեան, և այլք. և 'ի նեղքոյ տանց նոցա էն կրպակք, որոց միոյ միոյ ամսօրեայ վարձք էն իբր հնգետասան ռուփի։

Լոր Ղընէ պազար է վաճառատեղի ամենատեսակ վաճառաց և սպասուց պիտոյից կենաց, յորում էն կրպակք բազումք կրկնայարկք գեղեցկաշէնք, ըստ եւրոպական ախորժակաց ճարտարապետեալ. և կրպակք մեծամեծք լի ճոխութեամբ, իւրաքանչիւրոցն ոչ ինչ պակաս ունելով յինքեանս քան զերկու կամ զերեք հարիւր հազար ռուփեաց վաճառս. բայց գտանին և փոքրիկ կրպակք 'ի փողոցիս, ոչ յոյժ փարթամք։ Այս ամենայն կրպակք էն ստացուածք հնդկի ուրուն Խաբուի, այսինքն Պարոնի, 'ի վարձու տուեալք 'ի նմանէ. իսկ վարձողք կրպակացս այսոցիկ առհասարակ էն հընդիկք. ամենեքին քաղցրախօսք և քաղցրաբարոյք, ճարտարք յոյժ 'ի խորամանկել։

Թրէթի պազար է շինուած մեծ քառակուսի, միշտ 'ի բաց ունելով զդրունս. և էն 'ի նմա փողոցք բազումք նեղ և տղմուտ։ Յաջմէ և յահեկէ բազմութիւն կրպակաց, յորս վաճառին պիտոյք խոհանոցին, միրգ և ամենայն ինչ առատ և դիւրագին։ Մինչև յարշալոյս թանկագնի ևս վաճա-

ռին, զի ամենայն իրաց ընտիրքք յայնժամ գտանին։ Վասն որոյ խոհարարքք աշնուականաց վաղքաջ ընդառաւօտն գնան անդր լապտերօք։ Իսկ ապա նուաղէ գին նոցա, և զմիջաւուրքք դիւրագնի յոյժ վաճառին անդ ամենայն ինչ։ Պարձեալ և այս ամենայն կրպակք են ստացուածք հնդկի ուրուն Բաբուի, որ առնու յամսեան վարձ յամենայն կրպակացն իբր երեք հազար սրքքա ռուփի, որ առաւելու քան զերկու հազար հինգ հարիւր արծաթ Ֆիօրինս։

Պարայ պազար է շինուած գծուծ փայտակերտ, և ըստ մասին աղիւսակերտ, անձուկ և մթին փողոցիւք. և երկուստեք փողոցացն կրպակք, յորս վաճառին կտաւիք և մետաքսեայք սինէական հնդիկք և եւրոպականք. և ամենայն սպասք պիտոյից երկաթեղէնք, կտրոց, զմելին, ածելի, մկրատ, փականք, և սանդր, այլովքն հանդերձ։ Ի նմա և վերնայարկ, ուր է նոյնպէս ճանապարհ նեղ, և կից միմեանց սենեակք, որպէս 'ի Լյանս մերոյ աշխարհիս. և վաճառին անդ չուխայ և կտաւեղէնք։ Հանդէպ կրպակացս խորշս խորշս շինեալ կան 'ի բոյն աղաւնեաց, որք անդ երամովին ճախր առեալ ճեմին. և չէ օրէն ունել զմի 'ի նոցանէ կամ զենուլ, քանզի խստիւ արգելեալ է։

Ի 'ի քաղաքիս ազգ ինչ թուչնոյ, որ կոչի լաշխոր, նման օձակալ արագլի. այլ տուտն սորա կարճագոյն է, և կտուցն մեծ յոյժ, երկայն և ստուար, միայար ընդ գլխոյն. ուրն երկայնաձիգ, բարձրաբերձ ոտիւք, և ծանր 'ի թռիչս։ Ունի առ ուլամբն պարկ կախեալ արտաքոյ քան զփետուրսն, հանգոյն կծկեալ տկի. և ուտէ զքառորդ մասն եղին, կլանելով զոսկերսն մեծամեծս ամբողջ. և

որ ինչ ուտէ, 'ի պարկն անդր երթեալ խՃողին. և տակաւ ուռուցեալ մեծանայ պարկն քառապատիկ և ևս աւելի քան զնա ինքն։ Իսկ յետ ուտելոյ ցյագ, թռուցեալ նստի 'ի վերայ տանց և յապահով վայրս, կանգուն կալով 'ի վերայ ոտից, և յաՃախ ևս 'ի վերայ միոյ ոտին, զաւուրս 'ի բուն՝ մինչև մարսել զկերեալն։ Խաղմութիւն յոյժ սոցա գտանի 'ի շրջակայս Ալաբկի կոչեցեալ աւազանին, և 'ի վերայ տանց առ Գանգէս գետով։ Այս օգուտ մեծ է սոցա, մաքրելով զամենայն աղկանութիւնս քաղաքին, ուտելով զդիակունս հնդկաց պանկալացւոց, որք զմեռեալս իւրեանց ընկենուն 'ի Գանգէս։ Աստիկ արգելեալ է 'ի տերութենէ սպանանել կամ կալնուլ զթռչունքս. և եթէ դէպ լիցի ումեք յանգէտս գործել ընդդէմ հրամանին, տուժի վեշտասան ռուփիս կամ ոսկի մի, որ է իբր երկու հարիւր ղուռուշ։

Գ. Պարսյ պազարէն առ հին Ղնէ պազարն է նեղ և երկայն Ճանապարհ. և երկուստեք Ճանապարհին շինուածք փայտակերտք երկյարկեանք, գծուծք տեսլեամբ, բնակարանք վաՃառականաց Ղ՝ասըմ պազարայ՝ այս ինքն Աեիտասատ քաղաքի։ Ա՝աՃառականքս այսոքիկ վաՃառէն ազգս ազգս մետաքսեայ կերպասուց, այլ և ծաղկանկար մետաքսեայ թաշկինակս, որ կոչին Ղաֆայ աղլոխ, և ազգի ազգի մետաքսեայ զենջակս սփածանելիս հնդիկ կանանց, և այլն. որովք շինուածն անարգ՝ Ճոխանայ մեծագին մետաքսեայ վաՃառաքն։ Ի՝ընթեր սոցա բնակեն վաՃառականք Շ՝ալի և գոհար ականց, և սեղանաւորք բազմահարուստք. և 'ի միս փողոցին, որ հանէ յերզր Գանգէս գետոյ, են կրպակք պղնձավաՃառաց, և ոսկեթել զանա-

զան սպասուց Հնդիկ կանանց. այլ և կրպակք ոսկեթել ասղնեգործ մուճակաց արանց և կանանց, որ կոչին 'ի լեզու Հնդկաց Ոչ-դէ, և ոսկեթել առնացի գլխարկաց՝ որք կոչին Պէ՛ՀՀէ։

Լալտրկի է աւազան ջրոյ մեծ, իբր քառակուսի. որ ընու 'ի Պանդէս գետոյ և յանձրևաց, և անտի ըմպեն մեծ մասն բնակչաց քաղաքին։ Շուրջ զնովաւ է հարթ և ընդարձակ Ճանապարհ Ճեմելի, ուր բազումք 'ի լուսնակայ գիշերս երթեալ շրջին 'ի զբօսանս. և պահապանք արքունիք կան 'ի պահպանութիւն աւազանին։ Այս է շրջապատեալ աւազանն որմով կանգնաչափ բարձրութեամբ. և 'ի վերայ որմոյն բրտեայ բոլորշի վանդակ թրծեալ և բռեալ։ Այս ունի դրունս. ընդ մին մտանեն ջրկիրք, որ կոչին 'ի լեզու հընդկաց Պէ՛ՀՀէ, և են թուով իբր հարիւրաւոր. որոց լցեալ անտի զտիկս իւրեանց ջրով, վաճառեն զայն միոյ պղնձի փողոյ, և ևս թանկագին՝ ըստ հեռաւորութեան տեղւոյն։ Այս են վաթսուն և չորք պղնձի փողք՝ մի սրբբայ ռուփի Կալկաթայ։ Պարժուարութիւն մեծ է բնակչաց քաղաքիս ըստ պիտոյից ջրոյ. զի ջուր աւազանիս է աղեհամ և ոչ ստածիչ. և չիք 'ի քաղաքին աղբիւր քաղցր ջրոյ, և ոչ սովորութիւն ջրշիղջս ջրամբարս գործելոյ։ Այսուն որոյ յամենայն տունս են կարասք բազումք մեծամեծք խեցեղէնք, զորս ընուն ջրով յանձրևի, և զայն առնուն յարբուն ընդ ամիսս իբր ինն։ Օր զամիսս երիս անձրևէ անդ, սկսեալ 'ի յունիս կամ 'ի յուլիս ամսոյ, և դադարէ յամենեանն օգոստոսի կամ սեպտեմբերի. իսկ յայլ ժամանակս դուն ուրեք պատահէ անդ անձրև։ Այսոյն ժամանակ է անձրևային եղանակին և 'ի Պումպայի քաղաք. իսկ

'ի Ա՝ադրաս 'ի հոկտեմբերի սկսանի, և դադարէ 'ի դեկտեմբերի։

Բ։այց է 'ի քաղաքիս, և ընդ ամենայն հընդկաստան, ազգ ինչ նորաձև ջրհորոյ հեշտին և գիւրագին։ Օ՛ի փորէն զերկիր, և կուտէն զհողն շուրջանակի, մինչև գտանէն զակն ջրոյ. և ապա օղս խողովակաձև խեցեղէնս, մեծամեծս և լայնաբերանս իբր կէս կանգուն տրամագծիւ, և երկու կամ երեք մատնաչափ բարձրութեամբ, որ գտանին պատրաստական առ բրուտս, 'ի նեղքուստ և 'ի վեր շարեն 'ի վերայ միմեանց, և արտաքուստ ծեփեն զծակտին կաւով։ Եւ այնպէս զմիմեամբք ածեալ զօղսն, հասանեն մինչև 'ի վեր. և թողուն զաւուրս ինչ, մինչև ամրացի հիմն նոցա. և ապա շուրջանակի ընուն տակաւ զբրածն։ Բ։ուրք իբր հնգետասան 'ի վերայ անցեալ, և յետ ամրանալոյ լցեալ հողոյն՝ շինեն զբերան ջրհորոյն աղիւսակերտ կամ այլազգ որպէս և կամին. և ապա սկսանին հանել անտի ջուր 'ի պէտս։ Բ։յլ ջուր ջրհորոց քաղաքիս չէ քաղցր որպէս 'ի Ա՝ադրաս։

Բ։ռ Ա՝ալտրկի աւազանին է փողոց լայն և ընդարձակ, և անդ է ժողովատեղին վաճառականաց՝ անուանեալ Ա՝ՔՍՔԷՆՃ. անդ է և տպարան, ուր յաւ մենայն աւուր տպեալ, և ձրի բաշխին հազար օրինակք յայտարար թղթոյ ազգի ազգի վաճառաց. և երիցս 'ի շաբաթու լինին անդ տօնավաճառք բազմազան վաճառաց. այլ և ձիոց և կառաց և դեսպակաց։ Օ՛ի 'ի պատճառս սաստիկ տօթոյն՝ սովորութիւն է 'ի հնդիկս դեսպակաւ շրջել 'ի ցերեկի. և է դեսպակն ազգ ինչ նորաձև բազմոցի յարկածածուկ, ունելով երկուստեք դրունս պատուհանօք. լապտերս կրկին յառաջոյ, և յետ

Tragen der Sänfte

[illegible]

կուսէ պատուհանս կրկին փոքրիկս, և երկուստեք ընդ մէջ զոյգ լապտերաց և կրկնակ պատուհանացն՝ բառնալիս ստուարս յեղեգանէ, որ 'ի լեզու հընդկաց կոչի եղեգն այն Պոմպոս։ Որովք 'ի վերայ ուսոց բարձեալ տանին զբազմոցն բեռնակիրք մերկք, չորք կամ հինգ, և կամ եւս աւելի ըստ հաճոյից բազմականին. և կոչին նոքա Պոյ կամ Պերայ, և մին 'ի նոցանէ տանի հովանոց մեծ՝ գնալով առաջակողմեան դրամբ դեսպակին. և կոչի նա Արտար, կամ Արտար պերայ, որ է աւագ բեռնակրացն. և վարձ նորա առաւել է ռուփի մի քան զայլոց բեռնակրացն։ Իսկ զբազմոցն զայն կոչեն հնդկաստանեայքն առհասարակ Փալանքի կամ Փալանք. քանզի Փ՝ նշանակէ քառորդ մասն, և Լ՝ զգումար տասն բիւրու. որով կամք են ասել, զի քսան և հինգ հազար ռուփեաց ունեւորքն՝ կարեն դեսպակաւ գնալ։

'Ի վերնայարկ ժողովատեղւոյ վաճառականացն է դահլիճ մեծ սիւնազարդ, գեղեցիկ և պայծառ մեծամեծ պատուհանօք։ 'Ի մի կողմն բազմութիւն դպրաց, և 'ի միւս կողմն է տեղի վերակացուաց տպարանին, և գործարան այլ և այլ պաշտօնատարաց, որոշեալ փայտակերտ գեղեցիկ վանդակօք։ Իսկ 'ի միջավայրին 'ի դատարկ տեղւոջն բեմ կազմեալ, անդ չորիցս ամի ամի առնեն հանդէս վաճառաց. ուր զափիոնն Պենարէսայ և Դանայ ածէ 'ի վաճառ տէրութիւնն, աւուրքն ինչ յառաջ հրատարակեալ 'ի լրաթղթի և առանձինն՝ դաշինս և պայմանս ազգի ազգի 'ի դիւրութիւն գնողաց. զորս և 'ի նմին աւուր 'ի բարձր բեմի ընթեռնուն նախ քան զսկսանել վաճառացն, և ապա սկսանին վաճառք։ Հինգ արկեղք միանգամայն

վաճառին. և գին միոյ արկեղն 'ի չորեքհարիւր ռուփեաց բարձրանայ հասանէ մինչև ցհազար և աւելի ևս։ Արկիցս գտայ անդ առընթեր. և վաճառեցաւ մի մի արկղ մինչև հազար և երեք հարիւր ռուփեաց. և գտան, որք քսան այլ ևս ռուփիս յաւելին 'ի գինսն, բայց սակաւք։ Յաւուր վաճառիս բազմութիւն վաճառականաց խռնի 'ի տեղի անդր յամենայն ազգաց. և յերկուս կամ յերիս ժամս աւարտի տուրևառն այն Ճոխ և մեծագումար դրամոց։ Իսկ գնողք առաքեն զափիոնն 'ի Չին. զի անդ մեծարգի է յոյժ, և փոխանակ ծխախոտոյ 'ի գործ ածի։ Ռանզի և սինէացւոց սովորութիւն է հանգոյն արևելեայց ձգել ծուխ, որպէս և 'ի Կոստանդնուպօլիս. այլ նոքա փոխանակ խոխլիոյ ՌՒ-ՌՒ-Ի, ընուն զընդունարանն ՂԼԻ-ԼԻՆ ափիոնաւ, և կրակ 'ի վերայ եդեալ, ծծեն զմուխ նորա։ Ափիոնն տաճկաստանի չէ այնչափ յարգի 'ի Չին որպէս զհնդկաց աշխարհին։

Մերձ 'ի Ալտրկի աւազանն է և տուն Աստուածաշնչի ընկերութեանն, Ռէյդերս պիլտինկն, մեծաշէն կրկնայարկ. յորում են բազմութիւն սենեկաց՝ միաձև պատուհանօք։ Մերձ 'ի տեղի անդր են և կրպակք երևելի ոսկերչաց Հեմիլդէնի և Ռուէնդիմէնի, և գրատունք այլ և այլ, և կրպակ կարուակի եւրոպական կօշկաց, և վաճառանոցք Այպեռնի և Ռիլէնի, և այլ ազգի ազգի իրաց գործարանք և կրպակք։ Մերձ անդր բնակեն և վաճառականք անգլիացիք, Աղեքսանտրի ընկերութիւնն, Ռրուդենտ Մեդելոպի, Ցիերլի, Մեգընդօշի ընկերութիւնքն, և Ռալմերեան ընկերութիւնն՝ որ յաւուրս լինելոյ իմ անդր տնանկացաւ պարտեօք երեք հարիւր լաք ռուփեաց, որ է 30,000,000 ռուփի։

Խաւերն-հող է շինուած կրկնայարկ մեծակա-
ռոյց և հոյակապ. ներքնայարկ նորա սալայատակ,
սպիտակ և կապոյտ քառակուսի մարմարիոնեայ
քարամբք. և 'ի Ճակատ սրահի վայրայարկին է ան-
դրի մեծ վիմարդեան հսկայաձև սպիտակ՝ Ս. ա-
ռլոս Մարգուիզ Կոռնուալիս հիւպատին անգ-
ղիացւոց, և 'ի ձեռին նորա ոստ արմաւենի 'ի նը-
շան յաղթութեանն ընդդէմ Խիփու սուլթանին
հնդկաստանի։ Ի յետ յաղթութեանն 'ի դառ-
նալ իւրում 'ի պատերազմէն՝ մեռաւ օրհասիւ մա-
հուն 'ի Կազիփուր, որ է մերձ 'ի Կալկաթա,
յամի տեառն 1805, 'ի հասակի վաթսուն և վեց
ամաց։ Արձանագիր շիրմի առնս երևելւոյ տե-
սի 'ի Ռնտոն քաղաք, յորմէ եկեղեցւոյ սրբոյն Պա-
ղոսի, յանդղիական բարբառ օրինակ զայս.

To the Memory of
CHARLES Marquis CORNWALLIS,
Governor-general of Bengal,
who died 5th October 1805, aged 66, at Ghazeepore in the Province of Benares,
in his progress to assume the command of the Army in the Field.
This Monument
is erected at the Public expense,
in testimony of his high and distinguished public character,
his long and eminent public services, both as a Soldier and a Statesman,
and the unwearied zeal with which his exertions were employed
in the last moment of his life
to promote the Interest and Honour of his Country.

Տեսլութիւն մաքսատանն մեծի, որ է 'ի ցա-
մաքին, է ըստ առաւելագոյն մասին 'ի ձեռս հրն-
դիկ պաշտօնէից, որք կոչին Մարբար. միայն մաք-
սապետն և թիկնապահք նորա են անգղիացիք. և

որպէս 'ի դատաստանատանն 'ի վերնում ատենին դատաւորացն երեցունց 'ի մերազնեայց էն թարգմանք, պարոնայքն Յ. ընդլում Բ. էտ, Գէորգ Բ. էտ, և Բ. էտ Յ. ընդլում, և այլք 'ի պաշտօնատարաց հայազգիք, սոյնպէս և աստ մի 'ի պաշտօնատարացն է 'ի մերազնեայց Գրիգոր Թորոսեան, որ բնակէր 'ի բերան Գանգէս գետոյն, 'ի զգուշութիւն վաճառաց փախուցելոց 'ի հարկէ մաքսից։ Այս մաքսէն անդ անգղիացիք ութառ հարիւր 'ի վաճառաց մտելոց 'ի քաղաքս Հընդկաց. իսկ 'ի կտաւեաց և յայլոց վաճառաց ելելոց 'ի քաղաքէն և որ 'ի մերձակայ գիւղից ածեալ լինին՝ զնոյն մաքս առեալ ութ առ հարիւր, տան թուղթ՝ անուանեալ Պաւանի, և կնիք 'ի վերայ ածէն վաճառացն. որպէս զի եթէ նոյն վաճառք առաքեսցին այլուր՝ դարձուցցեն յետս երիս առ հարիւր ըստ տուեալ մուրհակին. և դարձուցեալն այն մաքս կոչի Տրօքէք։ Իսկ որք գաղղիացի դրաշակաւ բերեն վաճառս նաւք 'ի հնդիկս, պարտին հատուցանել վեշտասան առ հարիւր. և որք դրաշակաւ սպանիացւոյ կամ գաղղիացւոց առաքեն վաճառս յայլ աշխարհ, կորուսանեն զվերոյ ասացեալ Տրօքէքն։

Դրամն սովորական յաճախեալ 'ի Կալկաթա՝ է [illegible], որով վարին հաշուեմատեանք ամենայն վաճառականաց, և տէրութեանն իսկ։ Տգեղ է տեսլեամբ քան զԲ. ադրասայ Բ. ըկադ ռուփին, բայց արժէ առաւել քան զայն վեց և կէս առ հարիւր։

Այս սակ հաստատուն ունի տէրութիւնն անգղիացւոց. իսկ 'ի տուրևառս հասարակաց և 'ի փոխանակագիրս, է ուրեք՝ զի առաւելու մինչև

ուԹ առ հարիւր, և է ուրեք՝ զի պակասէ քան զվեց և կէս առ հարիւր։ Ի՝ ռուփին վեշտասան Ն։ է, բայց պիտակ անուամբ. զի ոչ վարի 'ի ԿալկաԹա անա արծաԹի որպէս 'ի Ի՝ադրաս. այլ անդ մի անայն է չորս պղնձի փող, ձևով և մեծուԹեամբ հաւասար ռուփւոյն. և վաԹսուն և չորք յայնցանէ արժէն մի ռուփի։ Ի՝ արի դեռ ևս 'ի ԿալկաԹա (Բ)ՐՕՆ կոչեցեալ փող, զոր կոստանդնուպօլսեցիք ԼՍՈՒԸ ՊՈՒՇՈՒՂՈՒ կոչէն, և հնդիկք Ղ՝ՈՒԸ, յորոց ուԹսուն՝ է պղնձի փող մի. բայց այժմ աղքատք ևեԹ 'ի կիր արկանեն զայն։ Ի՝ արի 'ի քաղաքիս և ոսկի դրամ, անուանեալ ԼՒ-ԼՕՀԸ կամ Ա՝-ԼՕՀԸ, զոր ոմանք կոչէն լոկ Ի՝ՕՀԸ, մեծուՔ և ձևով համանման ռուփւոյն, և արժէ վեշտասան ռուփի։ Բայց դուն ուրեք գտանի սա. զի անդ զնացիք ժողովեալ տանին զայնս յաշխարհ իւրեանց։ Բայց յայսցանէ 'ի գործ ածին և ԹըղԹեայ դրամք ըստ զանազան արժէից՝ 'ի հինգ ռուփեաց մինչև ցհազարաւորս, որ կոչին պէնքնօԹ։ Բ՝ՐԴ պէնքնօԹք բազմատեսակք գտանին, Հինտուստան պէնք, Բենիմն պէնք, ԼԷ. բայց ընտրելագոյն է պէնքնօԹն Պէնկալ պէնքի։ Ամենայն վաչխ 'ի քաղաքիս տուեալ 'ի տէրուԹենէ է այժմ հինգ առ հարիւր 'ի տարւոջն. իսկ վաճառականք տան ուԹ կամ ինն առ հարիւր, և երկոտասան իսկ առ հարիւր նեբէ առեանն։ Իսկ եԹէ ոք աւելի քան զերկոտասան պահանջիցէ, և փոխառուն յանձն առնուցու, կորուսանէ փոխատուն զգլուխ դրամոցն։

Ի՝ աճառականուԹիւն քաղաքիս ոչ յոյժ բարգաւաճ՝ գտանի այժմ որպէս երբեմն. քանզի յետ սփռելոյ ընդ աշխարհ Եւրոպական կտաւոց, դա-

դարեալ իմն է տուրևաւ տեղւոյն, և չէ իսկ շահաւ
ւէտ վաճառականութիւնն՝ որ է արդ՝ի ձեռս անգ-
ղիական ընկերութեանն։ Բայց հանդերձ այսու
ամենայնիւ է անդ բազմութիւն վաճառականաց
յամենայն ազգաց, այլ և՝ի մերազնեայց։ Զի
քաղաքս այս է իբրև ամբարանոց հնդկաստանի.
և վաճառք յամենայն քաղաքաց հնդկաց այսր ժո-
ղովին, և աստի սփռեալ տարածանին յԵւրոպա,
՝ի պարսկաստան, յԵգիպտոս, և՝ի Կոստանդ-
նուպօլիս։

Բերք քաղաքիս են որիզ բազմատեսակ ա-
ռատ և դիւրագին, զի յամին երկիցս սերմանի.
և մետաքս, լեղակ, բամբակ, շաքար, այլովքն
հանդերձ։ Իսկ՝ի Ցաքայէ գայ անդր բամբակ, և
բամբակեայք, և ազգի ազգի կտաւիք, և բեհեզ
բազմատեսակ. և ընտիր Մալմալ, և Ղազապանի
գօտիք, Շիրիշաքար, Մուհապէդխանէ. այլ և
քաղցրաւենիք նարընջի և կոճապղպեղի, այլովքն
հանդերձ։

՝Ի Պթաւիոյ բերեն պղինձ, և զանազան հա-
մեմ, ընկոյզ հնդիկ, պղպեղ, մեխակ խաբանքէլ,
հիլ՝էաւ՝էաւ-էլ, կոճապղպեղ, և մշորի՝ որ է նեպաթ
շաքարն. այլ սա չէ ազնիւ որպէս Ղինու նեպաթն
Ինլա- անուանեալ։

՝Ի Աէիտապատէ և՝ի Ղասրմ պազարէ բե-
րեն լեղակ և մետաքս, և մետաքսեայս ընտիրս,
փաֆտայ գոյնզգոյն, խուրթնի բազմատեսակ, տի-
մի գօտիս, մետաքսեայ թաշկինակս՝ զոր կոչեն
Ղափայ աղլուխ, և այլ զանազան մետաքսեայ ըն-
տիր և ծաղկեայ կերպասս։ ՝Ի Գուճրաթայ և՝ի
Ասրաթէ բերեն լեղակ, բամբակ, և մետաքսեայս
ճամկաւորս ալաճայս, չիթարի և կերմէսիւտ, ոսկե-

թել ծաղկեայ դիպակս «ԷՐՈՅՆ», ծաղկաւէտ գօ-
տիս, և ոսկեթել մուճակս արանց և կանանց, և
գլխարկս ոսկեթելս աղնուականաց հնդկաց։

'Ի Մադրասէ բերեն ազգի ազգի բամբա-
կեայս ընտիրս Ճամկաւորս՝ զոր կոչեն Կընկամ, և
թաշկինակս գեղեցիկս, և այլն։ 'Ի Վիշմիրէ բե-
րեն ազգի ազգի Վէմերպէնտ և Շ'առ շալս, և
քըքում։ 'Ի Կոլգոնտայէ, այսինքն 'ի Հայտարա-
պատէ, բերեն անդամանդ և ոսկի. 'ի Պահրինէ
և 'ի Մանարէ բերեն մարգարիտ. 'ի Մեկուայ և
'ի Հաւայէ ոսկի և արծաթ և յակինթ կարմիր և
կապոյտ, ձիանս, և մեղրամոմ։ 'Ի Մէլեան կղզւոյ
բերեն կինամոն, կապոյտ յակինթ, և զգոհար ակն՝
որ յանուն տեղւոյն կոչի Մէլեան։ 'Ի Պնարիսէ,
'ի Փաթանայ և 'ի Մալուայ բերեն ափիոն, և 'ի
Մախսուլի-բադամ քաղաքէ ընչադեղ, և ազգի
ազգի Ղինթս՝ որ կոչին Պալամքար։ Յեգիպտոսէ
բերեն խըսիր, և զամբիւղս, արմաւ, խահվէ,
կոնձեղ «ՊՊԻԼԷԻԷ», և այլն։ Բայլ և ձիս յԵ-
գիպտոսէ՝ բերեն անդր. զի ձիանն հնդկաստա-
նի մանունք են որպէս զմտրուկս, իսկ մեծամեծքն
վատք և դանդաղք։ Ցան որոյ պարսիկ և ա-
րաբացի ձիանն մեծարգի է յոյժ անդ։ Իսկ 'Ի
Ցաձկաստանէ բերեն ափիոն. բայց գիտել պարտ
է զեղանակ անդր 'ի ներքս մուծանելոյ, քանզի
խստիւ արգելեալ է. և կարմիր պղինձ՝ «ՊՈՒՐ», և
անօթս պղնձեայս, երկաթ անգործ, բուստ՝ «ԲՐՃՈ»,
չուխայ սև, և կարմիր, և կանաչ սակաւ՝ որ գնայ
'ի Մեկու. սեկ՝ «ՈՒՊԻՈ» կարմիր և դեղին, իսկ յայլ-
լոց երանգոց սակաւ. սալէպ, թիւրակէ՝ «ԲԻԲԷՈ»,
պալասան Մերուի, խաշնդեղ՝ «ՈՈՒԷՈ», ձէթ և ձի-
թապտուղ, պաղատիտ և չամիչ 'ի Օմիւռնայ, և

այլ միրգս չորս։ Իսկ Յ,ուրոպայ բերրն, չուխայ, և բամբակեայս ազգի ազգի, և բեհեզս, չիթ, կլնա կամ, ցփսի, և անօթս ապակեայս և երկաթիս, թուղթ գրոյ, պարանս նաւուց, և կտաւ առա- գաստի, ցքի, ռօմ և պիրայ. ազգս ազգս գի- նեայց, և զանազան ըմպելիս, ապուխտս և խՃուղս եղին և խոզենի, սառտելա ձուկն, խաւեար, պա- նիր, և դդմաՃ։ Ասիոն և ժամացոյցս, և կաշի. և ազգի ազգի գլխարկս և հանդերՃանի տիկնանց, կօշիկս և գլխարկս պարոնաց, թամբս ձիոյ, և զա- մենայն կազմածս կառաց, և սպեղանիս զանազան, հրազէնս, և վառօթ, և գնտակնեարս՝ այսինքն սուլ- մայ, կտրոց և զմելին և միրատ, չանկալ դանակ, և այլ բազմատեսակ գործիս։ Յ,ու համառօտիւ ա- սել, զամենայն որ ինչ հնարաւորեալ գործին Յ,ու- րոպա՝ բերրն անդր, և է ինչ՝ որ վաՃառի շահա- վէտ, և է՝ որ տուժիւք. բայց ես չտեսի՝ թէ ոք բե- րեալ ինչ Յ,ուրոպայ և չկարաց վաՃառել անդ։

Յ,ՐԽԵԼՓՈՅՆ Ի ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ ՄԵՐԱՆԵԱՅՑ Ի ԿՈԼԿՈ- ԹԱ, ՍՈՓԱ ԵՆ։

Պարոն Սարգիս Յովհաննեան.
Պարոնայք Աւետ Աղաբեգեան։
Պօղոս Յորդանանեան։
Ղազար Աղաբեգեան։
Սոքա յետինքս երեքեան անուանին՝ի ստորագրու- թիւնս Աղաբեգեան ընկերութիւն։
Պարոնայք Յարութիւն և Գրիգոր Աքգարեան։
Պարոն Գէորգ Յանոս Խարաղամեան։
Պարոն Գէորգ Գրիգորեան. և այլք։

Ի Կալկաթա քաղաքի, ըստ Ճիշտ համարոյ գտանին տունք հայկազնեաց իբր վաթսուն. այլ յոյժ սակաւք ի նոցանէ զգենուն զձև հայեցի։ Ոչխարկ նոցա է նորաձև ինն ի սև թաւրընջէ այս ինչն խաստիքէէ կազմեալ, և կոչի Ռեաձարի գուտակ կամ մանիլու գուտակ. այլ արդ ծերունիք ևեթ կրեն զայն։ Ոսկ տիկնայք նոցա կրեն գըլխարկ ականակուռ, որ կոչի Ռամպարայ. բայց այժմ յոլովագոյնք յարանց և ի կանանց զգենուն զձև եւրոպական։ Պործ է նոցա վաճառականութիւն. և մեծաւ մասամբ պարապեն ի գրագրութիւնս անգղիացւոց ի գործատունս, և են նոցա վարձք ըստ իւրաքանչիւր արժանեաց ի քսան ռուփեաց մինչև ցերկերիւր և ևս աւելի յամսեան։ Ան ի նոցանէ և դպիրք ի գործ տէրութեան, ոչ ըստ աւուր վարձկանք, այլ ըստ թերթից գրելոց։

Պտանին ի քաղաքիս և ընդ բոլոր հնդկաստան բազմութիւն քրիստոնէից սեամորթք, ևս և ի Հայոց, որք զգենուն զձև եւրոպական. և ոմանք ի նոցանէ զգենուն զձև Հայոց, գնան յեկեղեցի, և տան զմանկունս իւրեանց յուսումն հայ և անգղիական բարբառոյ։ Յաւուր քննութեան մանկանց Արդասիրական Ճեմարանին, որ միանգամ ի տարւոջն սահմանեալ է յամսեան յունուարի, գտայ և ես անդ ընդ այլոց պարոնաց. և պատանեակ մի սեաւ ի Հայոց յաղթող գտաւ քան զամենեսին ի հայ և յանգղիական բարբառ։ Ընդ ես զսոսա ոչ արկի ի համար ընդ այլ տունս Հայոց։

Երաշնեայք արդ ի հնդիկս չեն այնչափ Ճոիք ի ստացուածս որպէս երբեմն. զի որպէս յառաջագոյն ասացաք, զկնի սփռելոյ եւրոպական կտա-

ւեաց ընդ աշխարհ. դաղարեալ իմն է տուրևառ համօրէն հնդկաստանի. և որ կայն՝ է 'ի ձեռս անգղիական ընկերութեան վաճառականաց։

Բայց 'ի հնդիկ բնակչաց քաղաքիս գտանին ճոխք բաղումք, որոց անքաւ մեծութիւնք են, մինչև ոմանց 'ի նոցանէ չգիտել ճշգիւ՝ թէ որչափ ինչ իցէ նոցա. և կոչին սոքա 'ի լեզու հնդկաց Բաբու, այսինքն Պարոն կամ Տիրայ։ Ոմանք 'ի սոցանէ են տեարքք վիճակաց գետնոյ, և կոչին Զմինտար Բաբու. այլոց եկամուտք են 'ի վարձուց տանց և կրպակաց. և կէսք յարգէն զարծաթ իւրեանց յայլևայլ իրս, և մասն ինչ յոսկի դրամոցն պահէն 'ի տան և կամ այլ ուրեք թաղեալ. իսկ այլք զարծաթ իւրեանց 'ի վաշխի տուեալ տէրութեան, առնուն հինգ առ հարիւր 'ի տարւոջն։ Ուստի գտանին ոմանք, որոց գանձս մեծամեծս պարտի տէրութիւնն, միոյ միոյ 'ի մուրհակաց պարտուցն բովանդակելով յիսուն և կամ հարիւր լաք ռուփի։ Այս է մի լաքն հարիւր հազար ռուփի. որով յիսուն լաքն գտանի 5,000,000 ռուփի։ և հարիւր լաքն 10,000,000 ռուփի։

Ուրուն 'ի Բաբուից էր պալատ գեղեցիկ, զարդարեալ ըստ եւրոպական օրինի, հեռի 'ի քաղաքէն իբր տեղի զբօսանաց։ Այս էր շուրջ զպալատամբն պարտէզ մեծ, և բազմութիւն աշխատաւորաց պահապանաց և սպասաւորաց 'ի նմա։ Ցեսի անդ և խորշս խորշս գեղեցկաձև փայտակերտս, ամրափակեալ երկաթի և պղնձի վանդակօք, և 'ի միջի նոցա ազգս ազգս չորքոտանեաց և թռչնոց աշխարհին հնդկաց և այլոց աշխարհաց. զոր ես յետ Լիճիգալ պարտիզին՝ որ 'ի Լոնտոն՝ զսա հա-



55.

Zlatyj Kirpk

մարիմ Երկրորդ։ Ցեսի 'ի պարտիզիս և ունգեղ-
ջիւր մի մեծ ընտանեցուցեալ, որ առանց կապա-
նաց շրջէր համարձակ։

Մերձ 'ի տեղի անդր էր և այլ պարտէզ և
տուն զբօսանաց այլոց ուրումն Խաբուի. և էին 'ի
պարտիզի անդ եօթն աւազանք ջրոյ միաձևք, մե-
ծամեծք յոյժ, 'ի բազմահատոր կոփածոյ քարանց.
և առ նոքօք բազմապտոյտ Ճանապարհք, ընդ որս
Եթէ յածիցի ոք, թուի նմա այնպէս՝ Եթէ բազ-
մութիւն անթիւ աւազանաց իցեն։ Այլ աւազա-
նացն ջրանցք բազումք էն միաձևք 'ի կոփածոյ քա-
րանց, ընդ որս փոխին ջուրքք այլմէ յայլ. և լի էն
աւազանքն ձկամբք մեծամեծօք։ Այն ոմանք 'ի մե-
ծատանց աստի, որոց Ղոպտար սպասաւորք յետ
կուսէ կառացն գնան, գաւազան արծաթի ստուար
ունելով 'ի ձեռին։ Զգեստ նոցա է Մալմալ բե-
հեզ սպիտակ բարակաման, և կրեն 'ի գլուխս փա-
կեզն 'ի շալէ Վիշմիրի. և 'ի գնալն ուրեք յայց,
առնուն զանձամբ շալ Վիշմիրի սպիտակ կամ
յայլ գոյն, որպէս տեսանի 'ի պատկերիդ։

Սովորութիւն է 'ի քաղաքիս, և ընդ բնաւ
իսկ հնդկաստան, ունել բազմութիւն սպասաւո-
րաց. զի իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ 'ի մի ինչ գործ
ծառայութեան կարգեալ է, և յայլ ինչ ոչ սպա-
սաւորէ։ Այսն այնորիկ 'ի տունս աղնուականաց
հնդկաց, այլ և մերազնեայց, գտանին ամբոխ հա-
բիւրաւոր սպասաւորաց, կէսք հարկաւորք, այլք
'ի ցոյց Ճոխութեան և մեծութեան։ Այս չէն վարձք
նոցա ծանուցք. զի յերից կամ 'ի չորից ռուփեաց
մինչև ցՀնգետասան՝ ըստ արժանեաց պաշտամանն
է սակ վարձուց նոցա։ Բայց ամենեքին նոքա 'ի
տունս իւրեանց Ճաշեն, զի չէ անդ սովորութիւն

կերակրելոյ զսպասաւորս. և 'ի գիշերի գնան 'ի տուն, բաց 'ի սակաւուց՝ որք մնան 'ի տան տերանց իւրեանց, որք և են բնիկ պաշտօնեայքն։ Որպիսի են դռնապանք, որք 'ի լեզու Հնդկաց կոչին Տարպան. զի չէ անդ սովորութիւն փակելոյ զդուռն տան, այլ զօրն ողջոյն մինչև ցկէս գիշեր 'ի բաց կան. իսկ ոմանց միշտ իսկ զտիւ և զգիշեր։ Վասնզի փակել զդուռն տան՝ վատահամբաւութիւն մեծ է 'ի Հնդիկս. և միայն պարտապանացն փակին դրունք տանց, որք և կոչին Տրուալի այսինքն դ-հլ-ղ։ Վասնզի փակեալ կան նոքա 'ի տան յարգոյ աւուրս, և ոչ կարեն պարտատերքն ունել զնոսա օրինօք և տալ 'ի բանտ։ Իսկ յաւուր կիւրակէի ազատութիւն է յօրինաց, և մինչև ցկէս գիշեր բաց են դրունք տան նոցա, զի յայնմ աւուր չէ օրէն ունել զոք կամ բանտարգել առնել. վասն որոյ և շրջին հաւմարձակ մինչև ցմէջ գիշեր։ Իսկ յետ կէս գիշերոյ, քանզի համարի երկուշաբաթի, դարձեալ մտանեն 'ի տունս իւրեանց, և փակեն զդուռն մինչև ցշաբաթի աւուր կէս գիշերն. որով 'ի Հնդիկս ազատութիւն մեծ է պարտապանաց։

Ղոպտար, զոր վերագոյնն յիշատակեցաք, կոչի սպասաւորն՝ որ զհետ գնայ տեառն իւրում; կրելով 'ի ձեռին արծաթի գաւազան երկայն և ըստուար։ Բայց պատիւ յայլ քաղաքս Հնդկաց, այլ և 'ի Մադրաս, դատաւորաց միայն պահի. որոց յետ կուսէ Ղոպտարքն 'ի վերայ կառացն կան. բայց 'ի Կալկաթա օրէն է և ընդհանրական փաստաբանի վերին ատենին։ Այլ եթէ յաղնուականաց և ոք յամ ազգաց կամիցի ունել Ղոպտար յետկուսէ կառացն, մարթ է նմա՝ հատուցանելով տերութեանքսանև հինգ հազար սրքբայ ռուփի 'ի խնդիր հրա

մանի։ Պտանին 'ի Հնդիկս և այլ սպասաւորք, որոց սպասք պաշտաման զարմանալի իմն թուին օտարաց. որպիսի են Սարքարք. Պրջպասիք, Լսանսամանք, Հարքարայք, Փիատայք, Ոքիտարք, Փանքատարք՝ որ շարժեն հովահար, Պտարք՝ որ են մատռուակք ջրոյ և սառուցիչք, և այլ բազում ազգք ազգք սպասաւորաց, զորոց եթէ մի ըստ միոջէ ասել կամիցիմք, ուրոյն գրոց պէտք լինին։

Ըստ ուսումնասիրութեան մասին ոչ սակաւ եռանդն է, եթէ 'ի Մերազնեայս և թէ յայլ բնակիչս Վալկաթայ։ Զի բաց 'ի դպրոցացն և 'ի տպարանաց, զորոց ասացի յիւրաքանչիւր տեղւոջ, է անդ և այլ դպրոց մեծ կրկնայարկ, յորում են սենեակք մեծամեծք. և 'ի նոսա վարժապետք հընդիկ և անգղիացի բարբառոյ Փորթուգէշք, որոց ձրի աշակերտին մանկունք հնդկաց. զի զվարձս վարժապետացն և զամենայն ծախս հատուցանէ ընկերութիւնն անգղիական։ Այս էին աշակերտեալ 'ի նմա մանկունք և պատանիք իբր հազար։ Այն և այլ դպրոցք, յորս որք և աղքատ մանկտին յամենայն ազգաց ձրի վարժի յանգղիական բարբառ. և ոչ միայն այս, այլ և վասն հնդիկ օրիորդաց է անդ վարժարան ձրի, ոչ յոյժ մեծ։ Այս ամենայն տպարանք քաղաքին միահամուռ են աւելի քան զտասն։

Ոսկ ըստ երաժշտութեան մասին՝ ինչ մի արժանի համարիմ պատմել։ Զի 'ի խնջոյս և 'ի հարսանիս հնդկաց և այլոց ազգաց՝ սովորութիւն է անդ ածել կաքաւիչս, որ կոչին 'Լաջվալայ, և անուն կաքաւոյն՝ 'Լաջ։ Այս են նոքա հնդիկք յայլ և այլ ցեղէ պարակցեալ խումբ մի յարանց և 'ի կանանց, հանդերձ նորաձև նուագարանօք,

որ են Թմբուկ, փողք եղեգնեայ նման սրնգի, և քնար երկաղեան՝ որոյ է տուան երկայն և այլանդակ։ Այս Թէպէտ այսոքիկ չեն ինչ ախորժելի որպէս զեւրոպական նուագարանս, զի Թմբրեցուցիչք են, բայց քաղցրանուագ երգք նոցա 'ի հընդիկ և 'ի պարսիկ բարբառս, և քաջ արուեստաւոր կաքաւ նոցա ապշեցուցանէ զեւրոպացիս իսկ։ Ռաջարուեստք 'ի սոցանէ գտանին 'ի Տաքա և 'ի Գուճրատ քաղաքս, և անտի գան 'ի Կալկաթա։ Օգեստք նոցա են 'ի գունաւոր կամ 'ի սպիտակ բեհեզէ, որ կոչի Շիլէ. այսինքն է սահանխառալ Ռէնպէնքն. և քղանցք նոցա ոսկեթել և ասղնեգործ, և կարի յոյժ լայն. զի պերճադոյն նոցա պատմուճանն յօրինի իբր 'ի հնդեւտասան պրակ Ռօֆ բեհեզէ։ Տեսի խումբս 'ի կաքաւչաց ատտի 'ի Ռումբ պայի, 'ի Մադրաս, այլ և 'ի քաղաքիս՝ 'ի տան հնդիկ պարոնաց, և յազգայնոցս իսկ սակաւուց. զի սոքա ոչ սովոր են յաճախ ածել զնոսա 'ի տունս իւրեանց որպէս բնակիչք Տաքայ քաղաքի։ Գտանին 'ի կողմանս Գորոմանտելայ կաքաւիչ օրիորդք, որոց ծնօղք նոցա նուիրեալ են զնոսա դէց իւրեանց. և կաքաւէն նոքա 'ի մեհեանս ևեթ առաջի վեհագունից կուռցն Ռընկրոնադայ, Ռկատայի, և այլոց։

Յաճախեալ է յոյժ 'ի քաղաքիս Վարկիլէ ծխաձիգ գործին. և այնպէս հասարակաց լեալ, զի և տիկնայք և օրիորդք վարին նովաւ, և մերաշնեայք իսկ. մինչև համարձակիմ ասել՝ Թէ ինն տուն 'ի հարիւրոյ ունին զսովորութիւնն զայն։ Գտանին իսկ ոմանք, որք զօրն ողջոյն ձգեն զծուխ, և է հնար նոցա կալ առանց հացի, բայց առանց ծխելոյ անցուցանել զօրն ոչ է հնար։

Ծխախոտ նոցա է տերև ինչ նման թեմպեքիին Շիրազայ և Սպահանու, որ 'ի գործ ածին 'ի պարսկաստան և 'ի Կոստանդնուպոլիս։ Ողբացուցեալ զտերևն զայն և փշրեալ՝ զանգէն շաքարաւ և փոշւով վարդի և այլ նիւթովք, և կազմեն անտի գնտակս այլ և այլ մեծութեամբ, և վաճառեն կշռով։ Այս անուն կշռոյն է Սեր, որ է իբր 250 տրամ ըստ մերոյ կշռոյս։ Այս ըստ ազնուութեանն վաճառի մի Սերն երկուց և երից ռուփեաց մինչև ցՀնդեստասան և ևս աւելի. և է անուն զանգեալ ծխախոտոյս Կուրաքու։ Այն 'ի քաղաքիս բազում կրպակք՝ յորս վաճառի ծխախոտս այս. և աստի տարածանի ընդ ամենայն Հնդկաստան, զի ազնուագոյն համարի սա և առ բնակիչս խոր Հնդկաց։

Կրկին տեսակք են նարկիլէի, մեծ և փոքր. զմեծն կոչեն մերաղնեայք Ալավաղալեան, զփոքրն Ալալեան. իսկ Հնդիկք զմեծն կոչեն Հուքայ, և զփոքրն Կուրկուրի։ Զի է Հուքային տուտն ըստուար և երկայն, երփնագոյն մետաքսեայ և ծաղկանկար, որ և կոչի Լաջայ կամ Լէջայ, և շինեն զայն անդէն 'ի քաղաքին։ Այլոց ազնուագոյնն և ոսկեթել գայ անդր 'ի Աքնաւուր քաղաքէ։ Ընդ զՀուքայն 'ի գործ ածեն ազնուականք և երևելի վաճառականք, և մեծուհիք. զի սպասաւորի պէտք են առ 'ի կրել զայն։ Այս է անուն սպասաւորին Հուքապարտար, որ զայն ևթթ ունելով պաշտօն՝ եթէ 'ի տան և եթէ արտաքոյ, ուր ուրեք գնայ տէր իւր 'ի ձաշ կամ յընթրիս՝ և նա բարձեալ 'ի յուս զգործին և կրակարան բուրվառաձև 'ի ձեռին՝ երթայ անդր. և մինչև ցարշալոյսն իսկ եթէ գէպ լիցի յամել նման անդ, սպասէ նմա։ Իսկ տէր նորա

առ 'ի ցոյց մեծութեան բարձր ձայնիւ կոչէ զսպասաւորն այսպէս. Հոգեպարարք՝ հոգոյ լա՜ այսինքն Նարիէլ Բէր. և զարձեալ յորժամ կամի տալ նորոգել զծուխն, կոչէ բարձր ձայնիւ. Հոգեպարարք Ջըլէմ լա՜։ Զկուրկուրին 'ի գործ ածեն աղնուականք, եթէ ունիցին ինչ նուաղութիւն շընչոյ. և այնոքիկ՝ որ ոչ կամին վարձել վասն այնր սպասաւորս, այլ և արհեստաւորք և հասարակ մարդիկն։ Զի չէ սորա տուան երկայն, այլ աջոյ ձեռամբ կալեալ մերձ 'ի բերանն, ընդ եղեգն թզաչափ ծծեն զծուխ նորա, և ապա դնեն 'ի վերայ աթոռակի՝ որ յայն սակս իսկ շինեալ է։ Իսկ աղքատք 'ի բուն նարկիլ պտղոյ անցուցեալ փող եղեգնեայ, ընդ այն ձգեն զծուխ. ուստի գործին այն կոչեցաւ նարկիլէ։ 'Ի ծանր հարկաց ծխախոտոյս գանձս բաղումս ժողովէ անգղիական ընկերութիւնն, և ամենեքեան մտադիւր հատուցանեն, միայն զի մի պակասեսցէ ծխախոտ։

Եւ և այլ ինն սովորութիւն 'ի քաղաքիս, զի յաճախ 'ի կիր առնուն զվան տերև և զԱրփարի, զորմէ տեսցեն խնդրողք 'ի Գ. հատոր Աշխարհագրութեան Ասիոյ։ Այոյց յաճախագոյն և ա 'ի գործ ածի 'ի Մադրաս և 'ի Փիլիպպեան կղզւոջ 'ի Մանիլա քաղաք։ Ունեն 'ի հնդիկս 'ի վան տերևոյ և լիցս՝ թօմ, և է համեմահամ և գիւրամարս։ Իսկ մոխիր Արփարւոյ մաքրէ և սպիտակացուցանէ զատամունս, և զօրացուցիչ է ընդաց։

Սովորութիւն է ազգայնոցս մերոց պարոնայց 'ի Պալկաթա, յաւուր կիւրակէի յետ նախաճաշոյն՝ յինն ժամէ մինչև ցերկոտասան՝ յայց երանել միմեանց։ Եւ եթէ արք չլցեն 'ի տան, տիկնայք և օրիորդք մեծարեն զհիւրն. իսկ եթէ և ոչ տիկ-

նայք գտցին 'ի տան, տոմնակս ըստ Եւրոպական զ
րինի թողեալ անդ՝ մեկնին 'ի բաց։ Զէ օրէն պա
տուէր անդ զհիւրս քաղցրաւէնեաւ կամ այլով
իւիք, ըստ սովորութեանէ ասիացւոց և այլոց. և տմար
դութիւն իսկ է յամել հիւրոց քան զկէս ժամ
առ հիւրընկալուսն։ Ուստի յերիս ժամն շրջեալ
յայց, դառնան ապա 'ի տունս իւրեանց. և 'ի յա
ջորդ կիւրակէն շրջին առ այնոսիկ, զորս յանցե
լուսն հիւրընկալան։ Ա.յսու շրջանաւ այցելութեանէ՝
բարեկամութեանն յօդ անխզելի պահի առ նոսա։
Իսկ տիկնայք ընդ պարոնայս եկանէն յայց ընդ
երեկս յեօթն ժամէ մինչև յեօթնեւկէս, և յամեն
մինչև ցիսն ժամն։ Նթէ յոյժ մտերիմք և ընտա
նիք իցեն միմեանց, յամեն և ևս մինչև ցտասն
ժամն, և ոչ աւելի։ Իսկ եթէ վասն իրաց ինչ պարտ
իցէ նոցա գնալ առ միմեանս, երթան 'ի ցերեկի՝
յինն ժամէ առաւօտուն մինչև ցերկոտասան. և
յամեն առ միմեանս զքառորդ ժամու, կամ թէ
ևս աւելի զկէս ժամ։ Միանգամայն իսկ ասել.
ամենայն իրաց սահմանեալ ժամանակք են անդ,
և ընդ բնաւ հնդկաստան. և դուն ուրեք ինչ գոր
ծի 'ի տարաժամու,

Յայցելութիւնս ծննդեան և զատկի՝ տանու
տէրն կամ տանտիկինն սրսկէ արծաթի անօթով
վարդաջուր զհիւրովքն։ 'Ի նմին աւուր և ման
կունք Մարդասիրական Ճեմարանին խմբովին ընդ
վարժապետս իւրեանց շրջին յայց։

Ա.խտն կոչեցեալ Պօլիբ-Մարդոս, զորմէ բա
զում խնդիրք են առ բժիշկս՝ թէ արդեօք յապա
կանութենէ՞ օդոց Ճարակիցի, եթէ տարափոխե
լով այլմէ յայլ, յայտնապէս անդ Ճարակի 'ի խռ
նաւութենէ օդոց, 'ի խանգարմանէ ստամոքսի,

'ի ցրտոյ և 'ի դժուարամարս կերակրոց, և չէ տա-
բափոխիկ *։ Պէտք է ախտիս իւղ կինամոնի. զի
յորժամ ախտացելոյն ցաւին անդամքն, ծանրանայ
գլուխն, և նողկայ կամ փսխէ, իսկ և իսկ ջերմա-
ցուցանէն զսենեակ նորա հրով և ծխով ընտիր
կինդրկի «ԸՂԷՆԴ» առ 'ի փարատել անտի զթթու
հիւթս, և քաջ ցամաքեցուցանել զխոնաւութիւն
անկողնոյն. և ապա գրգռէն զփսխումն գաղջ ջրով,
արկեալ 'ի նա կաթիլ մի կամ երկու իւղ կինա-
մոնի։ Այս ստէպ 'ի փսխել նորա մատուցանէն նմա
զջուրն առանց խնայելոյ, մինչև թուլանալ ախտա-
ցելոյն 'ի սպառ։ Ապա զնեալով զզարկ բաղկին և
զհատակ ախտացելոյն, ըստ կարի զօրութեան նո-
րա 'ի հնգետասան կաթից մինչև ցերեսուն ար-
բուցանէն նմա զիւղն՝ արկեալ 'ի սակաւ ինչ չայ
կամ 'ի լոկ ջուր ջերմ։ Այթէ չզգայցէ ինչ կիզումն
'ի ստամոքսի և 'ի փորոտիսն, նշան է վտանգի ախ-
տացելոյն. վասն որոյ վաղվաղակի առանց յապա-
ղելոյ ընկողմանեցուցեալ զնա 'ի բարձր մահիճս՝
ջերմացուցանէն զանկողինն հրով, կրակարանս խե-
ցեղէնս եդեալ 'ի ներքոյ։ Այս շփէն անդադար
զոտս և զսրունս նորա. և եթէ ցրտացեալ իցէն,
ընուն պարկս բաղումս ջերմ աղիս, և նոքօք փա-
թաթէն զոտս և զսրունս նորա, փոխելով ստէպ
զաղն. և զամենայն զմարմինն շփէն նոր ասուէիս

* Զժանտ ախտիս զայսմանէ գրեաց մանրամասնաբար բժիշկ ոմն հայազգի Դաւիթ Մկրտչեան, ուսեալ 'ի Կալկաթա, և անդ 'ի վարժս բժշկականին պատեալ. որ և յանգղիական բանակին 'ի հնդիկս առնէր բժշկութիւն։ Զայն Ճառ նորա թարգմանեալ խառնելոյն՝ տպագրեցին առ 'ի պարծանս ազգիս առաջի եւրոպացւոց՝ միանձունք Մխիթարեան ուխտին, փափաքողք միշտ պայծառութեան ազգիս և ազգայնոցս։

ՔԼՈՒԷԼԼԻՍ։ Այս դարձեալ արբուցանէն նմա զիւղն կինամոնի 'ի քսան կաթից մինչև ցքառասուն՝ ջերմ ջրով կամ չայիւ. և եթէ դարձեալ չզգայցէ կիզումն, և չերևեսցի 'ի նմա քիրտն, յայնժամ անյուսալի է ապաքինումն նորա։ Այլ սակայն եօթնասուն 'ի հարիւրոյ զերծանին այսու դեղով։

Որովհետև բազումք ցանկան գիտել՝ թէ ընդ բոլոր Հնդկաստան քանի՞ տունք արդեօք գտանիցին յազգայնոցս, առ 'ի գիտութիւն նոցա յաւելում գրել, թէպէտ և առ փոքր մի զարտուղի յառաջարկեալ Ճառէս Ելանիցեմ։ Ընդ սմենայն Հնդկաստան հազիւ գտանին տունք Հարիւր և յիսուն. զի բազմութիւն մերացնեայց է 'ի Պալկաթա, քանզի գտանին անդ այժմ տունք վաթսուն։ Իսկ յայլ քաղաքս, 'ի Մադրաս՝ տունք իբր քսան և հինգ, 'ի Բումպայի՝ հինգ կամ վեց, 'ի Պուրադ՝ երեք կամ չորք, 'ի Ցաքա՝ Հնգետասան կամ քսան, 'ի Ղիչրա՝ երկու կամ երեք. 'ի Ֆէտերիկնակար՝ որ է Միրամիռուռ՝ տուն մի, 'ի Ղասմպազար՝ այսինքն 'ի Մէիտապատ՝ երկու կամ երեք, 'ի Փունթիշերի՝ տուն մի, զի բնակէ անդ Ֆնտոն Բաբիկեան. 'ի Մախսուլիբադամ՝ մի կամ երկու, 'ի Բեկու և 'ի Հաւա՝ իբր հինգ, 'ի Պինանգ՝ երկու կամ երեք, 'ի Մինգափուռ՝ իբր հինգ, 'ի Պթաւիա և 'ի Սմարանգ՝ չորք կամ հինգ, և ՅԱՀռա՝ տուն մի. քանզի բնակէ անդ Յակովբ Պետրոսեան՝ որ կոչի Կոռնէլ Յակովբ։ Այս է սա սպարապետ Թագաւորին Ակպարապատայ, և ունի ընդ իւրև՝ որպէս պատմեն՝ գունդ զօրաց Հայոց, արս ընտիրս իբր Հարիւր՝ յայլ և այլ քաղաքաց, այլ և կոստանդնուպօլսեցիս Յնիղափուէ և 'ի Սամաթիոյ։ Այս են ինքն և զօրք իւր սիրելիք յաչս Թա-

գաւորին և Թիկնապահք նորա։ Այս նահանգ հեռի է 'ի Կալկաթայ աւելի քան զքառասնօրեայ ճանապարհ, և վտանգաւոր յոյժ յերեսաց աւազակաց. և գնան անդր դեսպակաւ։ Յոլովագոյնք յազգայնոցս բնակելոց 'ի Հնդիկս՝ են Ջուղայեցիք և շիրազեցիք. և ամենայն Հնդկաստան է Թեմ առաջնորդին նոր Ջուղայի։

Ռատ և բազմագոյն ազգք պտղոց են 'ի քաղաքիս քան յայլ ամենայն քաղաքս Հնդկաստանի։ Յետ Մանկուստան անուանեալ պտղոյն՝ որ ելանէ 'ի Մալազա, 'ի Պինանգ, և այլ ուրեք ուրեք, ազնուագոյն պտուղ է Ամբն բազմատեսակ՝ ձևով, համով, և մեծութեամբ. ընտիրն կոչի 'ի Հնդկաց Տիլիասանդ, և 'ի մերազնեայց Լապապի Ամբ. և է՝ որ կշռէ օխայ մի։ Համառօտիւ կամեցեալ բացատրել զազնուութիւն սորա, համարձակիմ ասել՝ զի ամենայն ազգի ազգի պտղոց աշխարհին մերոյ Ճաշակ 'ի միումն յայսմիկ գտանի յամենահամ պտղիս։ Մինչ դեռ տհասն է, կանաչ է գոյն նորա, և թթու հանին, որպէս զի աղքատաց 'ի կիր առնուլ զայն փոխանակ լիմոնի 'ի կերակուրս. և խառնեալ յորիզ, կազմեն ազգ ինչ կերակրոյ՝ որ կոչի ամբաթթու. այլ և զանազան համեմիւք և իւղով նարկիլի առնեն թթուուտս՝ որ կոչի ամբաճառ։ Լ և միւս այլ պտուղ ազնիւ 'ի քաղաքիս, ազգ ինչ քաղցր նարնջի՝ ախորժահամ և զովացուցիչ, որ 'ի բնակչաց տեղւոյն կոչի Կոմլայ։ Լ անդ և նարկիլ պտուղն, զորմէ գտցեն ինդրողք Մշխարհագրութեան 'ի ջորրորդումն հատորի մասին Ասիոյ. այլ և Վիլա կարմիր և դեղին, և անուանեալն Սերֆի Ամբ, և Կոյաղ, և Անանաս՝ որոյ հատն վաճառի միոյ պղնձի փողոյ

և Ն՛ամպու , Պթաւի , Փափայի , Ռաթալ , և Կուլապամպու՝ որ վարդահամն է , և այլ ևս բազում ազգք պտղոց՝ զորոց զանուանսն ոչ յիշատակեմ , զի և ոչ ինչ յարգին առ ազնուականս երկրին ։ Իսկ 'ի պտղոց մերոյ աշխարհիս՝ է անդ նուռն , թուզ , խնձոր , սեխ , ձմերուկ , լիմոն քաղցր բազմատեսակ , և վարունկ առատ ։ Պտանի և խաղող , այլ սակաւ յոյժ և թանկագին . ուստի և գինի չկք անդ , այլ բերեն 'ի Պաղլիոյ , 'ի Լիսպոնէ , 'ի Մատերայէ , 'ի Շիրազէ , և յայլոց քաղաքաց , և վաճառեն ծանրագնի ։ Բայց բնիկք տեղւոյն փոխանակ գինւոյ ըմպեն զօշարակ նարկիլ պտղոյն՝ որ է 'ի համ Պօզայի . և կոչի այն Ֆարի , և վաճառողացն անուն Ֆարիվալա ։ Ի ծանր հարկաց օշարակիս եկամուտք բազումք են անդ ղիական ընկերութեանն . և չէ օրէն ամենայն ումեք վաճառել զայն , այլ թուով սահմանեալ են կրպակք ։ Այս այսպէս պատրաստեն զօշարակն ։ Օ՛հատս նարկիլի՝ որ ողկուզօրէն զբնէ ծառոյն կախի 'ի բարձունս , մինչ դեռ տհասն է՝ հատանեն . և զստուար բնէ ողկուզացն կապեն անօթ ինչ խեցեղէն՝ որ կոչի Հանտի , և յողկուզաց անտի պրաղոյն մղի յանօթ անդր հոյզն բարեհամ ։ Այս ընդ նորաձև իմն սանդուղս երկիցս յաւուրն վերելակեալ 'ի ծառ անդր , զմղեալ հոյզն ժողովեն 'ի մի անօթ , զդատարկ անօթսն անդրէն 'ի բունս ողկուզացն կապելով . և զժողովեալն 'ի մի անօթ անդր հոյզ քաղցրահամ , թողուն զի թթուեսցի . և ապա առնուն յարբու�։

Բնակիչք Կալկաթայ բուն հնդիկք ոչ ուտեն երբեք մսեղէնս , զի արգելեալ է նոցա յօրինաց ։ Այսն որոյ կերակուրք նոցա են ազգի ազգի

քաղցրաւէնիք՝ քաջ արուեստիւք պատրաստեալ շաքարով և համեմիւք 'ի բազմատեսակ պտղոց իւրեանց. իսկ կերակուր հասարակաց է կաթն, և խարշեալ որիզ խառն ընդ զանազան կերակուրս բանջարեղէնս, զոր եփեն կարագով, և երբեմն ձկամբք։ Այսպէս տեսակք են կերակրոց նոցա, և գրեթէ առ հասարակ նմանք Լահնիին մերոյ. և կոչեն զայն ՎաՀռի. իսկ եթէ հիւթիւ նարկիլ պտղոյ պատրաստեսցի, յայնժամ կոչեն ՄալայիքաՀռի։ Զոր համեմեալ այլ և այլ համեմիւք, ածեն 'ի վերայ խարշեալ որիզոյ, և ուտեն ձեռամբ։

Լնոցա դարձեալ և ազգ ինչ հեղուկ կերակրոյ, զոր երբեմն լոկ ջրով և կարագով եփեն, և երբեմն ձկամբն՝ որ կոչի Մուլուկուդանի։ Այլ մերազնեայք եփեն զայն մսով կամ հաւեղինօք, որ առողջարար է յոյժ և կազդուրիչ. և ուտեն զայն խարշեալ ընտիր որիզով, և ամբաձառով՝ զորմէ ստորև ասասցուք։ Յոյժ ախորժեն անգղիացիք զկերակուրս զայս. զի տեսի 'ի Լոնտոն քաղաք զոմն, որոյ էր կրպակ առ տնին 'ի վաճառ այսր և էթ կերակրոյ. և կոչի առ նոսա կերակուրս այս ինդիան ֆուդ էն ռէյս. և ինդիան մուլուկուդանի էն ռէյս։ Այց 'ի կերակրոցն վաճառէր նա և զհամեմն նոցա պատրաստական՝ ամրափակեալ կնքով յապակեայ անօթս. և էն համեմքն այսոքիկ.

Աերմն մանանխոյ հաՀրալ.

Հալտի ֆէնէղ, յորմէ քաղցրավաճառք 'ի Կոստանդնուպոլիս կազմեն զքիչնիշ շէքերին.

Կոճապղպեղ ջէնճէֆիլ.

Աեաւ պղպեղ էնի պահար.

Լամիր հինտի. որ թէ չգտանիցի, մարթ է դնել փոխանակ այնր լիմոն։

Այս ամենայն յարեալ ընդ խարշած ձկան կամ մոյ և կամ հաւու, լեսուն 'ի քարի՝ որպէս ներկարարք զներկս իւրեանց 'ի լեսանի։ Այս ապա ածեն զնուվաւ զՀիւթ լիմնի, և կատարի կերակուրն։ Այն՝ որք սակաւ ինչ խստոր ևս ընդ համեմն խառնեն։

Այ և ազգ ինչ կերակրոյ ձկնեղէն, զոր մերաղնեայք դարձեալ կազմեն հաւեղինաք. և կոչի կերակուրն այն Պուզիդ։ Պիւրամարս է և յոյժ ախորժելի, մանաւանդ որոց ստամքսն տկար իցէ. և պատրաստի համեմիւքս.

Խստոր սակաւ։

Կոճապղպեղ զնձէքիլ։

Հալտի զինիշ զեռերձոց։

Մեխակ խարանքիլ։

Կինամոն Ռարչին։

Եւ պղպեղ. զոր ոմանք աղան, և ոմանք ամբողջ 'ի ներքս խառնեն։

Սակաւ ինչ սոխ խառն ընդ դիւրահալ բանջարեղէնս, որպիսի են դդում, պամեայ, թուրայի, մուրունկայ, և այլ այսպիսիք։

Մերաղնեայք յաճախ առնուն 'ի կերակուր զխարշեալ որիզ, զոր կոչեն խոշկայ. այլ և փիլաւ բազմատեսակ, յաղնիւ որիզոյ՝ որ կոչի բարակ բրինձ։ Պտանի և տեսակ ինչ ընտիր որիզոյ՝ որ է դոյզնագիւտ, զոր պարկաւ փոքու պարգևս առաքեն բարակամաց. զի տան հատ եփեալ եթէ կից առ միմեանս շարեսցի ըստ երկայնութեանն, լինի թզաչափ։

Իսկ այլ կերակուրք նոցա նմանք են մերոցն, բայց խառնեալք առատ համեմիւք։ Զիք առ նոսա յաճախութիւն խմորեղինաց, զի են անդ դժուաւ

բամարս. միայն 'ի խրախճանս և 'ի խնջոյս գնին սա-
կաւ ինչ 'ի մակընթրիս ընդ մրգեղէնս և ընդ
քաղցրաւենիս։ Եթէ խնջոյք պարու իցեն, կե-
րակուրքն ըստ անգղիական օրինի պատրաստին,
և լինին ընթրիքն յետ կէս գիշերոյ։ Զի մերազ-
նեայք արք և կանայք բնակեալք 'ի քաղաքիս քա-
ջահմուտք են քան զանգղիացիս 'ի պար. և յոյժ
սակաւք են 'ի նոցանէ տգէտք պարու և նուագա-
րանաց։ Եւ է յաճախեալ առ տիկնայս նուագա-
րանն Ֆիանֆոռթ այսինքն Զէմպալոյ. և սակաւ
ուրեք կիթառ և քնար տասնաղի։

Զիք առ նոսա սովորութիւն խահուէի, այլ
փոխանակ այնր ըմպեն չայ, խառնեալ 'ի նա մըս-
րի՝ որ է նէպալթ շաքարն, հանդերձ կաթամբ,
և կամ լոկ առանց կաթին։ Յաւուրն երկիցս
առնուն զայն, 'ի նախաճաշին և յետ ճաշուն. և
դուն ուրեք յետ ընթրեաց։ Յինն ժամուն առ-
նեն նախաճաշ, և յերրորդ ժամու յետ միջօրէի
ճաշեն. բայց այս կանոն ոչ յամենայն տունս պա-
հի, այլ որոց գործ չիցէ խափան ժամանակին։

Զհետ ազգի ազգի կերակրոցն կարևոր հա-
մարիմ յաւելուլ և նուսխայս ինչ առառաց Խոռ-
ղէէղ, զոր հանդերձեն արուեստիւ 'ի հնդիկս. և
մանաւանդ զՄքաճառին. զի թէպէտ և ոչ ամե-
նայն ուրեք գտանի Մքն, բայց մարթ է նուիլին
նուսխայիւ և զկաղամբիտն այսինքն գչառնաոպիտն և
զայլ բանջարս և զպտուղս առնել աճառ։

## ՆՈՒՍԽԱՑ ԱՄԲԱՃԱՌԻՆ

Յարիւր հատ ամբ ձեղքէ՛, և երեք օր աղի մէջ պահէ՛, և շարժէ՛ զանօթն ամէն օր. և ապա հանէ՛ զկուտն, և դի՛ր յարեգակն ութ օր կամ աւելի ևս. և յետ ցամաքելոյն՝ դի՛ր քացախի մէջ ութ օր, կամ այլ աւելի։

| | ՏՐԱՄ |
|---|---|
| Լեխուրի *երբ-իլի արմատ մանրած. | 200 |
| Կանաչ կոճապղպեղ ղէնձէքիլ մանրած. | 200 |
| Լատոր մանրած. | 200 |
| Մանր կանաչ պղպեղ ձեղքած. | 100 |
| Հալտի *ինիլ ղէ*երձոց ձմլած. | 100 |
| Մանանիխ հատ-հատ ամբողջ. | 100 |
| Ընջնդեղ *էօրէ օրոտ խարկած. | 100 |
| Եւ պղպեղ ամբողջ. | 25 |
| | 1025 |

Այս ամենայն զանգեալ քացախով, դի՛ր յարեգակն ութ օր. և ապա լի՛ց զամբն նուաւ, և կապէ՛ նեխուրով. և թրմէ՛ յանօթ ապակեայ. շաքարաւ և մեխակաւ խորոնքիլով եփեալ քացախի մէջ, և դի՛ր յարեգակն հնգետասան օր, ամրափակեալ զբերան անօթոյն։

## ԵՂԱՆԱԿ ԵՓԵԼՈՑ ՋՔԱՑԱԽ ՎԱՍՆ ԱՃԱՌՈՑ

| | ՏՐԱՄ |
|---|---|
| Քացախ. | 1000 |
| Շաքար. | 400 |
| Մեխակ խորոնքիլ. | 25 |

Ի միասին եփէ՛ մինչև ըստ բաւականին թանձրանայ. և յետ պաղելոյն, քամեա՛ և լի՛ց ՝ի վերայ աձառին։

Բայսու եփեալ քացախով կարես առնել յամենայն տեսակ իրաց աձառ։ Այլ եթէ առանց քաղցրի կամիցիս առնել աձառ, առանց շաքարի և մեխակի եփեսցես զքացախն։

## ԿԱՂԱՄԲԻՑ ԱՃԱՌ

Յրուեա՛ զկաղամբիսն այսինքն զչառնապէսն, և դի՛ր յարեգակն ութ օր կամ այլ աւելի՝ որ ցամաքի. և ապա եդեալ յանօթ ապակի, լի՛ց ՝ի վերայ նորա զքացախն եփեալ շաքարով և մեխակաւ, և թո՛ղ յարեգակն հնգետասան օր, ամրափակեալ զբերան անօթոյն։ Իսկ յետ հնգետասան աւուրց՝ քամէ՛ զքացախն, և բաղադրէ՛ ստորեդեալ համեմունքս. և լի՛ց դարձեալ ՝ի վերայ աձառին մինչև ՝ի բերան անօթոյն, և կրկին դի՛ր յարեգակն հնգետասան օր կամ այլ աւելի։

| | ՏՐԱՄ |
|---|---|
| Խստոր մանրած. | 200 |
| Կանաչ կոձապղպեղ զէնձէբիլ մանրած. | 200 |
| Կանաչ պղպեղ մանրած. | 100 |
| Ծանանեխ հառաքալ, և հալտի տէնէղ զէտէրձոց. | 100 |
| Քրնդեղ զէօրէ օրոս խարկած. | 100 |

## ԵՂԱՆԱԿ
## ՆԱՐԿԻԼԻ ԿԱՄ ՆՇԻ ԻՒՂ ԵՓԵԼՈՑ
## ՎԱՍՆ ԱՃԱՌԻ

Ի Նարկիլի կամ նշի եղն խստորով և արջընդեղով և մանանխով 'ի միասին եփէ. և ապա քամէ, դիր 'ի վերայ կրակի՝ որ կարմրի. և յետ պաղելոյն՝ լի՛ց 'ի վերայ աճառին։ Այլ գիտեա՛, զի հարիւր ամբին՝ վեցհարիւր տրամ իւղ կարևոր է։

## ԵՂՈՎ ԱՄԲԱՃԱՌ

Հարիւր հատ ամբ ձեղքեա՛, և դիր երեք օր յաղջուր. և ապա հանէ՛ զկտերն, և դիր յարեգակն ութ օր՝ որ ցամաքի։ Այլ յետ չորանալոյն՝ դիր 'ի մէջ քացախի ութ օր, և պահէ՛ զգուշութեամբ զաղաջուրն։

Ի 1025 տրամ համեմն քաղցր աճառին, զոր վերոյ գրեցի, Նարկիլի կամ նշի եփած եղուին զանգէ, և լի՛ց նովաւ զամբն. և ա՛րկ 'ի վերայ նորա զմնացեալ եղն և զաղաջուրն, և թո՛ղ յարեգակն հնգետասան կամ քսան օր։

## ԼԻՄՈՆԻ ԱՃԱՌ

Հարիւր հատ լիմոն ողջ ողջ ծակոտէ՛, և ապա լո՛ւա ջրով։ Վասն և հինգ լիմոնի կշռոյն աղ հարկաւոր է հարիւր լիմոնին։ Այսու աղիւ շարէ՛ 'ի բրտեայ անօթ զլիմոնն երն, և աղի հետն դիր

փոքր ինչ հալտի ձմլած։ Զբերան անօթոյն ա-
մուր փակէ՛, և յաւուրն երկիցս կամ երիցս ցընց-
ցէ զանօթն. և թո՛ղ յարեգակն ամիս մի, կամ
այլ աւելի։

Նթէ կամիս համեմիւք զլիմոնի աճառն առ-
նել, նոյնպէս արա՛.

Հարիւր լիմոն.

Պասանեհինգ լիմոնի կշռով աղ.

Երկու հարիւր լիմոնի ջուր։

Իսկ համեմքն այսոքիկ են.

| | ՏՐԱՄ |
|---|---|
| Հալտի մանրած. | 100 |
| Խստոր յստակած և մանրած. | 200 |
| Մանանեխ յստակած ամբողջ. | 100 |
| Կանաչ կոճապղպեղ կտրատած. | 200 |
| Բրջնդեղ խարկած. | 100 |
| Կարմիր պղպեղ ծեծած. | 100 |

Զայս ամենայն զատ զատ դիր յարեգակն
երկու կամ երեք օր՝ որ չորանան։ Ապա զլիմոնի
ջուրն քամի՛, ու տաղէ՛ կոտորով հրացեալ աղիւ-
սոյ. և լի՛ց զայն 'ի վերայ լիմոնին, և զբերան անօ-
թոյն ամրափակեալ՝ թո՛ղ յարեգակն ամիս մի
կամ այլ աւելի, ստէպ ցնցելով զանօթն։



# ՑԱՆԿ

## ԳԼԽԱՒՈՐ ԻՐԱՑ

### ՈՐ 'Ի ԳԻՐՍ ՑԱՅՍ


Աղբրէ՛ . տե՛ս Հրաղայ։
Աճառաց հնդկասպանի նոսխայ . 49։
Ամբ , ազգ պղոյ . 44։ Աճառոյն՝ որ 'ի նմանէ՝ նոսխայն . 49 . 51։
Ամբաճառ . տե՛ս Ամբ։
Անա , ազգ դրամոյ . 29։
Անդրիանոս սահմանեալ ճամանակ 'ի Կալիքիա , 'ի Հռոմպոյի , և 'ի Ասդրաս . 23։
Աղարանի անգղեացւոյ հիւպատին . 9։
Աղուելմբեհի գուանն և էրպաքի . 15։
Ապիճանի . տե՛ս Ալիմ։
Աքիոնի հանդէս վաճառոյն . 25։ Աքիոնի պիտառուին . 26։
Հաբուսի հնդկաց ճոխուին . 34։ Օգեսպ նոյա . 35։
Հալմերեան ընկերուին . 26։
Հաղանի Հայոց . 17։
Հնաքէլաց Կալիքիայ հաղարին ին . 6։ Հայ բնաքէլ նորա . 33 . Հրեայ բնաքէլ . 14։ Ասամրին բնաքէլ . 33։
Գանգէս գետ . 6։ Յաքն նորա ղբօսարան . 10։
Գանձապանն Կալիքիայ . 10։
Գերբեղման Հայր Սուրբեան վարդապետի Աղամալեան մինիարեանց , և Պարոն Կարապետի Սուրբեան . 18։
Գուղէր , ազգ ֆերաֆրոյ . 47։
Գօլիբրա-մծրպուս ախպն . 41։ Գեղ նորա . 42։
Դապասպանապանն Կալիքիայ , և ֆարդի նորա . 10։
Երբնի դապասպանի 'ի վերայ յանցաւորաց . 36։

Ոնոպոնն քամ Գալոտի որպիսի՞ ինչ է. 24։ Պոռոգա
բանուորների անուանին. 25։
Ողբոց. 18. 37։ տե՛ս և Նեմարան։
Որամ Պալիարոյ. 23. 28։
Որբոցքրի. տե՛ս Ոանիյապուն։
Չիեղեցին Հայոց. 15։ Յունաց. 16։ Լապինաց. 18.
19։ Նգղիացոց. 19։
Չանելի՛ 'ի գեղեղը Ոանգեսի. 12։
Չբօրիգեքի պարոնին. 8։
Հոջինձ. տե՛ս Պ աճառաբանությունն։
Ճանապարհ. տե՛ս Գողերանոց։
Մարի, օշրակ նարգիլ պողոյն. 45։
Մահ-ին-հոլ. 27։
Մեսարոն. 13։
Մերմ. տե՛ս Ոսպասպանապուն։
Մրքերի պաղար. 20։
Ողովարանն Հրեից. տե՛ս Պինակոթեք։
Պարքեի աստվանն. 23. 19. 22։
Պաշխոր Ռուլուն պարմանալի. 21։
Պան ինչ է. 34։ տե՛ս և Որամ։
Թիմոն աճառ. 51։
Յայրարիանաց. տե՛ս Հրաբանոց Հայոց։
Նախարար Պալիարոյ ազնիւ. 39։
Պոր. տե՛ս Չանելի՛։
Պաղամբեր աճառ. 50։
Պանուրջին տարեաց և լուանեաց. 12։
Պատա. տե՛ս Լոքվալայ։ Օ՞ի հայ բնակիչք Պալիարոյ
տաճկամոլ են 'ի խատա. 48։
Պեարդին-ոել. 7։
Պերակուրտ հայ և հնդիկ բնակչաց Պալիարոյ. 45-47։
Ոամանակ նախաճաշի նոցա և ընթրեաց, և ճաշու
ժամն. 48։
Պեսմօհր. տե՛ս Պ՞օհր։
Պլեմ Պալիարոյ տաղտի. 6։
Պոռնել Յակոբ, սպարապետ. 43։
Հայ բնակիչք Բոլոր Հնդկաստանի. 43։ Հայ բնակիչք
Պալիարոյ. 33։ Պարգ այցելուին նոցա և հիւր-

ընկալուրեն. 40։ Կերակուրք նոցա. 45-47։ Կա-
ճառական երեսելի հայ. 22։ Լսկեղեցի նոցա.
15։ Ցպարան նոցա. 14։ Պարզոց նոցա. 14. 41։
Հիւրանոց Հայոց 'ի Կալիաբա. 18։
Հիւրընկալուրեան կարգք 'ի Կալիաբա. 41։
Հնդիկք սահմանքն 'ի Կալիաբա. 33։
Հրաղոյք 'ի Կալիաբա. 13։
Հրեայ քնակիչք Կալիաբայ. 14։
Ղեմարանն եպիսկոպոսական. 7։ Մարդասիրական ճեմարանն. 14. 41։
Ղբլեկի, ապի գաղզրաբենոյ. 12։
Մատսապուանն Կալիաբայ. 27։
Մեհեան հրապաղարիցն 'ի Կալիաբա. 16։
Մոլուկուրանք, ապի կերակրոյ. 46։
Մուրկիաբայ բաղն. 14։
Մօտր, ոսկի դրամ. 29։
Ելմ. տես Ելմվալայ։
Ելմվալայ, ապի կատաւալոց. 37։ Որբորդ պարաւորք դրոց. 38։ տես և Կատաւ։
Ելարկել պարուղ. 44։ Ընարակ ղը ըմպելի. 47։ Ծուռ ցիր գործին 'ի նմանէ կապիալ. 40։ Զի խառնի այն և 'ի կերակուրս. 46։
Ելարկելի ծիւցիք գործի յաճախելոյ յոյժ 'ի հնդկիս. 38։ Ելալայլ պեսակք նորա. 39։ �ն ոսոսի կալաղանուանն. 40։
Ելաակ 'ի գեղն Պանգեա. 13։
Ելնի ցեր 'ի պէս աճառի եկեալ. 52։
Բրեղոյ պեսակ. 47։
Ասուանարան. տես Պարզոց և Ղեմարան։
Այր արբուն յաճախելոյ 'ի Կալիաբա. 48։
Ընկ պաղար հինն. 19։ Ելրն. 20։
Ոսպար, ապի սպասաւորք. 35. 36։
Ովրընկի բաղ. 13։
Պաճարոյ. տես Ելաակ։
Պանդուկ 'ի Կալիաբա. 13։
Պարոյ պաղար. 21։
Պենդեսոր, բղրեայ դրամ. 29։

Պարոյր 'ի Կալիարա. 44. 45։
Պամբալիատ. 10։
Պեմզերս. տե՛ս Պապասպանապան։
Պոր Կալիարայ որդիսն է. 23։
Պրիսոր Նորայեա 'ի Հնդիէս. 24։
Ոռոմէ. սբ՛ոռ ռոմէ. արիապ ռոմէ. 28։ տե՛ս և Պրամ։
Ոմէրը Նաւահանգիստ. 6։
Որդոր աղգ սպասաւորի. 25։
Ընդարոյ խորոյ պիտառուին. 40։
Ինաիոնա. 15. 18։
Ինդիէ. տե՛ս Պապասպանապան։
Սպասաւորաց բաղմութիւն 'ի Հնդիէս. 35։ Աղգի աղգի պաշտամունք նոցա. 37։
Վաճառականուին Կալիարայ. բերք երկրին. վաճառք որ յայլեայլ կողմանց գան անդր. 30։ Վաճառականք երեսելիք անդ 'ի Մերանիայց. 32։ Վաճառականք Պասրմպաղարայ. 22։ Յողովարարքին Վաճառականաց Լոսնէնճ. 24։
Վաղիրոյ օրէնք 'ի Կալիարա. 29.
Տէյմընդ-հոբրը. 7։
Տպարանք. 37. 24։ Տպարանն Հայոց. 14։
Տրօքէք, աղգ մարտ. 28։
Փալարի. տե՛ս Պէսպակ։
Փան գերեալոյ պիտառուին. 40։
Փողերանոցն Կալիարայ. 9։
Փողոցն Հայոց. 16։
Քայլա 'ի պէրս աճառայ եկեալ. 49։
Քէճերի. 7։
Քուլուրուլլայ ի Բաղ. 29։
Քօանուալիս հիւպատն անգղիացւոց. և արքանագիր շէրմի նորա. 27։
Օրմզ, աղգ գողոյ. 29։
Ֆոտ-ուիլիամ բերդն. 8։

[illegible]

ԳԱԱ Հին ձեռագրաց Գիտ. Գրադ.
FL0032424

HA
A 745

3
4